

<<ՅՈՒՔՈՄ>> ՄՊԸ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ԿԱՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐԱՍՆՈՒՑՄԱՆ և ՕՊՏԻԿԱԿԱՆ ՄԱՆՐԱԹԵԼԻ ՕԴԱՅԻՆ ԳԾԵՐԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
/ ՇՄԱԳ/ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____	3
1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ _____	4
1.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմաններ _____	4
1.2. Կլիմայի հակիրճ բնութագիր _____	5
1.3. Հողային ծածկույթ _____	9
1.4. Բուսական աշխարհ _____	Error! Bookmark not defined.
1.5. Կենդանական աշխարհը _____	Error! Bookmark not defined.
1.6. Բնության հատուկ պահպանվող տարածքներ _____	Error! Bookmark not defined.
1.7. Օդային ավազան _____	24
1.8. Ջրային ռեսուրսներ _____	25
2. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ _____	26
2.1. Մարզի սոցիալ-տնտեսական ցուցանիշները _____	26
2.2. Ազդակիր համայնքները, ենթակառուցվածքները /առողջապահություն, տրանսպորտային համակարգ, էներգացանց, կրթություն/, հողերի տնտեսական յուրացման բնութագիրը _____	29
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ _____	30
4.1. Նախատեսվող աշխատանքների նկարագրությունը _____	30
4.2. Հողային աշխատանքները _____	33
5. Այլընտրանքային տարբերակների վերլուծությունը եվ ընտրված տարբերակի հիմնավորումը	
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ _____	35
5.1. Ազդեցության հիմնական տեսակները _____	35
5.1.1. Շինարարական աշխատանքներ _____	35
5.1.2. Մթնոլորտային օդի պահպանություն _____	36
5.1.3. Ջրային ռեսուրսներ _____	42
5.1.4. Թափոնների կառավարում _____	43
5.1.5. Կենսաբազմազանություն _____	43
5.2. Շահագործման փուլ _____	48
6. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ _____	Error! Bookmark not defined.
7. ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	49
7.1. Բնապահպանական միջոցառումներ _____	49
7.2. Արտակարգ և վթարային իրավիճակներ _____	54
7.3. Մշտադիտարկումների ծրագիր _____	54
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____	56

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար, կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող ծրագրի, կամ գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Ծրագրերի և գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավորին չափ նվազեցման կամ բացառման պարտադիր միջոցառումների մշակման համար:

<<Յուքոմ>> ՍՊ ընկերությունը բջջային կապի կայանի էլեկտրամատակարարման համար նախատեսվում է 10/0.4 կՎ, 25 կՎԱ հզորության ԼՏԵ-ի տեղակայում՝ առանձին ցանկապատված տարածքում:

ԼՏԵ-ի սնումն իրագործվելու է «Շվանիձոր» 35/10 կՎ ե/կ-ի «Շվանիձոր» 10կՎ օդային գծից սնվել «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ պատկանող 10կՎ օդային գծից ճյուղավորումով:

Գծի ընդհանուր երկարությունը 245մ է, ևս 15 մ վերջին հենասյունից մինչև ենթակայան և ներքին միացում, որն ընդհանուր կկազմի 260մ: Այն անցնում է բնակեցված և չբնակեցված տեղանքներով, անցկացման համար նախատեսված է տեղադրել 8 հենասյուներ:

Օպտիկամանրաթելային մալուխի անցկացման համար կտեղադրվի 15 հենասյուն, ընդհանուր երկարությունը կկազմի 500մ:

Նշված տարածքում նմանատիպ ենթակառուցվածք ունի <<ՎիվաՍել-ՄՏՍ>> ընկերությունը, որի սպասարկման համար առկա է գրունտային ճանապարհ: Նախատեսվող գործունեության իրականացման շինարարության փուլում <<Յուքոմ>> ընկերությունը ևս կօգտվի նշված ճանապարհից:

<<Յուքոմ>> ՍՊԸ կողմից նախատեսվող բջջային կապի կայանի էլեկտրասնուցման և օպտիկական մանրաթելի օդային գծերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (այսուհետ՝ ՇՄԱԳ) և ՇՄԱԳ հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և Էկոլոգիական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն: Նշված օրենքի Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրույթային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի: Սույն հոդվածի 8-րդ կետի համաձայն բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում իրականացվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով: Նույն

կատեգորիայով իրականացվում է սույն նախատեսվող գործունեության փորձաքննությունը, քանի որ այն առնչվում է բնապահպանական տարածքների հետ:

Աշխատանքային նախագծի ՇՄԱԳ հաշվետվությանը ներառում է՝

- նախատեսվող գործունեության նկարագիրը, ֆիզիկական բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող նյութերի, արտանետումների, արտահոսքերի, թափոնների ծավալները, ֆիզիկական ներգործությունների մակարդակը,
- նախատեսվող գործունեության հնարավոր տարբերակների, այդ թվում նաև հրաժարման (զրոյական) տարբերակի նկարագիրը, ընտրված տարբերակի հիմնավորումը,
- հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի և բնական պայմանների նկարագիրը, էկոլոգիական և սոցիալական հնարավոր ազդեցությունների, ռիսկերի ու օգուտների վերլուծությունը և գնահատումը,
- շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական վնասի հաշվարկը և գնահատումը,
- հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը, ազդեցության ծավալները, ինչպես նաև նվազեցման, մեղմացման կամ վերացման հնարավորությունները,
- բացասական ազդեցությունների կանխարգելման, մեղմացման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի փոխհատուցման համար նախատեսվող միջոցառումների (շինարարության և շահագործման փուլերում) ծրագիրը,
- նախատեսվող գործունեության, հնարավոր ազդեցությունների, վերլուծությունների և գնահատումների պատկերավոր վկայություններ, մասնավորապես՝ աղյուսակներ, նկարներ, քարտեզներ, գրաֆիկներ, սխեմաներ և այլն:

1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՐՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմաններ

Նախատեսվող աշխատանքների տեղանքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի տարածաշրջանում: <<Յուքոմ>> ՍՊ ընկերության կողմից նախատեսվող բջջային կայանի էլեկտրամատակարարման համակարգը տեղադրվելու է Շվանիձոր բնակավայրի վարչական տարածքում, որը հանդիսանում է Մեղրիի համայնքի մաս: Նախատեսվող գործունեության իրականացման համար <<Յուքոմ>> ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով հատկացվել է 0,04 հա հողատարածք /անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 27102018-09-0023/ կառույցների տեղադրման համար /ԼՏԵ, բջջային կայան/: Էլեկտրամատակարարման և օպտիկամանրաթելային օդային գծերի անկացման տարածքները համընկնում են <<Չանգեզուր>> կենսոլորտային համալիրի>> ՊՈԱԿ-ի տարածքների հետ /համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարությունից 09.07.2019թ ստացված 5/22.3/51715 գրության/: Բնության հատուկ պահպանվող տարածքներում հողամասերի օգտագործումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի հեռավորությունը մոտակա համայնքից կազմում է մոտ ____մ, տարածքում ծառաթուփային բուսականությունը բացակայում է: Աշխատանքերը իրականացվելու են գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհներով:

Գործունեության ենթակա տարածքներում ծառեր չեն հատվելու, քանի որ ծառաթուփային բուսականությունը բացակայում է: Տարածքի հարևանությամբ առկա ճանապարհը կօգտագործվի շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Ռելիեֆ

Շրջանին բնորոշ է մասնատված, կառուցվածքային էրոզիոն-տեղատարումային ռելիեֆի տիպը՝ չափավոր գառիթափ, մեղմաթեք, մասամբ ժայռոտ լանջերով, ներժայթուկային և հրաբխանստվածքային ապարների ծալքաբեկորավոր կառույցներով:

Ռելիեֆն արտահայտվում է կարբոնատային, նստվածքահրաբխածին ապարների ծալքավոր, մասամբ թույլ ծալքավոր հիմքով: Ռելիեֆի ձևը՝ ջրաէրոզիոն, ջրակուտակումային է՝ լայն հովիտներով, ողողատներով և դարավանդներով, ձորակներով ու խոր մասնատված կիրճերով:

Տեղանքն առանձնանում է մինչև 28° թեքության լանջերով, ներժայթուկային ապարների զանգվածաբեկորային և հրաբխանստվածքային ապարների ինտենսիվ ծալքավորված հիմքով:

1.2. Կլիմայի հակիրճ բնութագիր

Տեղանքի կլիման բնութագրվում է բարձրադիր տեղանքներին բնորոշ զով ամառներով և ցուրտ ձմեռներով:

Օդի ջերմաստիճանը

Լեռնային շրջանների օդի ջերմաստիճանը շատ բազմազան է, այն կախված է տեղանքի բարձրությունից, ռելիեֆի ձևից և լանջերի դիրքորոշումից:

Միջին բազմամյա օդի տարեկան ջերմաստիճանը Մեղրի կայանում հավասար է 14.1(С:

Աղյուսակ 1.2. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը °С

Կայան	I	II	III	IV	V	VI	VIII	VIII	IX	X	XI	XII	Միջին
Մեղրի	1.4	3.2	7.8	13.9	18.8	22.9	26.1	25.6	21.2	15.1	9.2	3.9	14.1

Օդի միջին օրական ջերմաստիճանի անցումը 0(С-ից ըստ Մեղրի օդերևութաբանական դիտակայանի տեղի է ունենում փետրվարի 12-ին և դեկտեմբերի 28-ին: 0(С-ից բարձր ջերմաստիճանի օրերի քանակը Մեղրիում կազմում է 317 օր:

Գարնան գալը, այսինքն օդի միջին օրական ջերմաստիճանի անցումը 5(C-ից, տեղի է ունենում փետրվարի 28-ին և դեկտեմբերի 3-ին: 5(C-ից բարձր օդի ջերմաստիճանի օրերի քանակը Մեդրիում 277 է:

Ամռան գալը կամ օդի միջին օրական ջերմաստիճանի անցումը 10(C-ից, տեղի է ունենում մարտի 25-ին և նոյեմբերի 7-ին: 10(C-ից բարձր օդի ջերմաստիճանի օրերի քանակը Մեդրիում 226 է:

Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը Մեդրիում (+41(C) է, օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ (-18(C): Մեդրիում հողի սառչելու առավելագույն խորությունը 12սմ է, իսկ գլխամասային հանգույցի ուղղահաստածքում՝ 50-60սմ:

Տեղումներ և ձյան ծածկույթ

Ընդհանրապես, տեղումների քանակը խոնավաբեր քամիների ուղղության նկատմամբ, ուղղակի կախվածության մեջ է լանջերի դիրքորոշումից, ինչպես նաև տեղանքի բարձրությունից: Ուսումնասիրվող տեղանքի տեղումների քանակը տեղաբաշխվում է ոչ համաչափորեն, որը կախված է խոնավաբեր օդային մասսաների նկատմամբ տեղանքի բարձրությունից և թեքությունից: Հողմակողմ թեքություններում տեղումների քանակը ավելի շատ է, քան քամուց պաշտպանված թեքություններում:

Տեղումների քանակի 43-49%-ը լինում է ցուրտ ժամանակաշրջանում (նոյեմբեր-մարտ), ամենաանձրևային ամիսներն են ապրիլը և մայիսը, ամենաչորայինը՝ դեկտեմբերը:

Աղյուսակ 1.3. Տեղումների միջին բազմամյա ամսական և տարեկան քանակը, (մմ)

h/h	Կայանը	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	XI-III	IV-X	Միջ.տ
1	Մեդրի	18	18	32	41	52	30	10	7	13	23	24	15	107	176	283
2	Շվանիձոր	61	69	105	112	110	64	21	16	24	60	79	47	361	407	768

Մեդրիում տարեկան առավելագույն տեղումների քանակը հասել է 402մմ: Ամսական առավելագույն տեղումների քանակը կազմել է 113մմ, իսկ օրականը՝ 40մմ:

Մեդրիում ձյան ծածկույթի տասնօրյակային բարձրությունը ձմռան ընթացքում 27սմ է, իսկ գլխամասային հանգույցի ուղղահաստածքում՝ 50սմ :

Աղյուսակ 1.4. Չնաժածկի, կայուն ձնածածկի առաջացման և վերացման ամսաթվերը

Կայանը	Չնա ծածկ. օրերի թիվը	Չնաժածկի առաջացման ամսաթիվը			Կայուն ձնածածկի ձևավորման ամսաթիվը			Կայուն ձնածածկի վերացման ամսաթիվը			Չնաժածկի վերացման ամսաթիվը					
		միջին	վաղ	ուշ	միջին	վաղ	ուշ	միջին	վաղ	ուշ	միջին	վաղ	ուշ			

Մեղրի	16	22.12	15.11	-	-	-	-	-	-	-	27.02	-	15.0
-------	----	-------	-------	---	---	---	---	---	---	---	-------	---	------

Օդի խոնավությունը

Օդի գոլորշու առաձգականության տարեկան ընթացքը համապատասխանում է օդի ջերմաստիճանի ընթացքին և հասնում է առավելագույն արժեքների ամռանը և նվազագույնի՝ ձմռանը:

Բացի այդ, ջրային գոլորշու առանձգականությունը հակադարձ համեմատական է տեղանքի բարձրությանը. բարձրության աճման հետ նա փոքրանում է, իսկ բարձրության նվազման հետ, համապատասխանաբար, մեծանում: Ամռանը ջրի գոլորշու առաձգականությունը մեծանում է, իսկ ձմռանը՝ փոքրանում:

Աղյուսակ 1.5. Ջրային գոլորշու միջին բազմամյա ամսական և տարեկան առաձգականությունը (մմ)

h/h	Կայանը	I	II	III	IV	V	VI	VIII	VIII	IX	X	XI	XII	Միջին
1	Մեղրի	4.8	5.0	6.3	9.1	13.0	15.0	16.2	15.9	14.6	11.0	7.7	5.5	10.3

Օդի հարաբերական խոնավությունը, որը բնութագրում է օդի հագեցվածությամբ ջրային գոլորշիով, տարվա ընթացքում փոփոխվում է: Ամենաշատը դիտվում է ձմռանը, նվազագույնը՝ ամռանը:

Աղյուսակ 1.6. Միջին բազմամյա ամսական և տարեկան հարաբերական խոնավությունը (%)

h/h	Կայանը	I	II	III	IV	V	VI	VIII	VIII	IX	X	XI	XII	Միջին
1	Մեղրի	63	61	62	61	61	55	49	50	60	67	67	65	60

Օդի հարաբերական խոնավության օրական ընթացքը վառ արտահայտվում է ամռանը: Սովորաբար ներտարեկան բաշխման տատանումները աննշան են և կազմում են 18%, նվազագույնը տեղի է ունենում հուլիսին, իսկ առավելագույնը՝ հոկտեմբերին և նոյեմբերին:

Քամի

Ուսումնասիրվող շրջանում, ինչպես նաև ՀՀ շատ շրջաններում, բնորոշ է օդի լեռնահովտային շրջապտույտը, քամու ուղղությունը որոշվում է գետի հովտի ուղղությամբ: Լեռնահովտային շրջապտույտի ժամանակ լավ է արտահայտված քամու ուղղության օրական ընթացքը: Ցերեկային ժամերին հովիտներից տաք օդը թեքություններով բարձրանում է վերև, իսկ մնացած ժամանակ սառը օդը իջնում է ցած: Լեռնահովտային շրջապտույտը ուժեղանում է ամռանը, երբ լեռների և հովիտների միջև թերմիկ գրադիենտը մեծանում է:

Լեռնային շրջաններին հիմնականում բնորոշ է լեռներից փչող տոթ ու չոր քամին: Հաճախ դրանք դիտվում են տարվա ցուրտ ժամանակ, կան վայրեր, որտեղ քամու ուղղությունը կտրուկ փոխվում է՝ դիտվում է ջերմաստիճանի բարձրացում և խոնավության անկում:

Մեղրի կայանում գերակշռում են հյուսիսարևելյան քամիները: Քամու միջին ամսական արագությունը տատանվում է 1.4-1.9մ/վրկ սահմաններում: Տարվա ցուրտ եղանակին քամու արագությունը ավելի փոքր է, քան ամռանը:

Քամու տարեկան արագությունը Մեղրիում կազմում է 1.6մ/վրկ :


Նկար 1-ում բերված են քամու վարդը, իսկ աղյուսակներում քամու արագության և ուղղության տվյալները:

Աղյուսակ 1.7. Քամու միջին ամսական և տարեկան արագությունը, մ/վրկ.

h/h	Կայանը	Տրյուգերի բարձ. մ	I	II	III	IV	V	VI	VIII	VIII	IX	X	XI	XII	Միջին տար.
1	Մեղրի	11.0	1.6	1.7	1.6	1.5	1.4	1.6	1.9	1.8	1.8	1.4	1.4	1.7	1.6

Աղյուսակ 1.8. Քամու ուղղությունը

h/h	Կայանը	Կայանի բարձ. մ	Հս.	Հս-Արևելք	Արևելք	Հվ-Արևելք	Հրվ.	Հրվ-Արև	Արև	Հս-Արև	Շտիկ
1	Մեղրի	627	14	12	29	14	8	4	9	10	48



Նկար 1. Քամու վարդը ըստ Մեղրի կայանի տվյալների

1.3. Հողային ծածկույթ

Շրջանին բնորոշ են լեռնային անտառային դարչնագույն հողերը, որոնք ձևավորվել են չափավոր տաք կլիմայի պայմաններում, կաղնու և հաճարենու անտառատեսակների տակ, պորֆիրիտների, գրանոդիորիտների, կրաքարերի, ավազաքարերի հողմահարված նյութերի, ինչպես նաև ողողաբերուկային կավավազային և կավային կուտակումների վրա: Անտառային դարչնագույն հողերի տարածման շրջանների ռելիեֆին բնորոշ է բլուրների տեսքով բազմաթիվ բարձրունքներ, ինչպես նաև թմբեր և լանջեր, որոնք իջնում են կիրճերը և գետերի հովիտները:

Լեռնանտառային դարչնագույն հողերի ձևավորման բիոկլիմայական առանձնահատկությունները նպաստում են անտառային բույսերի համակեցությունների լավ աճին և մեծ քանակությամբ բուսական կենսազանգվածի առաջացմանը:

Լեռնային անտառային դարչնագույն հողերը հանդես են գալիս՝ կարբոնատային, տիպիկ, կրազերծված (լվացված) ենթատիպերով:

Դիտարկվող տարածքին բնորոշ են տիպիկ և կրազերծված ենթատիպեր, որոնք բնութագրվում են դարչնագույն և մուգ դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ՝ 10-14%, որը խորության ուղղությամբ արագ նվազում է: Հումուսային նյութերում հումինաթթուների ու ֆուլվոթթուների քանակը գրեթե հավասար է:

Գործունեության ենթակ տարածքի հողերն ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է: Ռեակցիան չեզոք կամ չափավոր թույլ հիմնային է: Այս հողերն ունեն բարելավ ֆիզիկական ու ջրաֆիզիկական հատկություններ, լավ արտահայտված ստրուկտուրա: Հողառաջացող ապարներից տեղանքում առկա են դելյուվիալ և դելյուվիալ-պրոյուվիալ նստվածքների գենետիկական տիպերը:

Հողերի էրոզվածության աստիճանն է բարձր է և դասվում է VI կարգին:

Հայաստանի կենսաբազմազանությունը

Հարավային Կովկասի կենսաբազմազանությունն ու էկոհամակարգերը համաշխարհային նշանակություն ունեն, որոնք թեև ենթարկված են կլիմայի փոփոխությունից, ենթակառուցվածքների զարգացումից և շահագործման այլ տեսակներից (անտառկառավարումից, արոտավայրերում գերարածեցումից, մշակաբույսերից, զբոսաշրջությունից, ձկնորսությունից և որսորդությունից) բխող զանազան վտանգների ու ճնշումների: Կարևորության և վտանգների այս համադրությունն արտացոլված է Բնության համաշխարհային հիմնադրամի (FZZ/WWF)

կողմից Կովկասյան տարածաշրջանը որպես «Գլոբալ 200» էկոտարածքներից մեկը ճանաչելու որոշման մեջ՝ որի հիմքում այնպիսի չափանիշներ են, ինչպես տեսակների հարստությունը, էնդեմիկ տեսակների առկայությունը, տաքսոնոմիկ եզակիությունը, անսովոր էվոլուցիոն երևույթները և հիմնական բնամիջավայրերի տեսակների հազվադեպ լինելը համաշխարհային մակարդակով: Ավելին, «Conservation International» կազմակերպությունն այս տարածաշրջանը ճանաչել է որպես համաշխարհային «թեժ կետ», այսինքն՝ կենսաբանական տեսանկյունից աշխարհի 25 առավել բազմազան և վտանգված ցամաքային էկոհամակարգերից մեկը:

Հայաստանը տիպիկ լեռնային երկիր է, որտեղ տարբեր լանդշաֆտային գոտիները և էկոհամակարգերը կազմում են բարդ բազմաֆունկցիոնալ համակարգ, որոնք նպաստում են հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանության ձևավորմանը: Բացի վերոնշյալը ՀՀ ամբողջ տարածքը գտնվում է «Birdlife International» կազմակերպության էնդեմիկ թռչունների տարածքում (ԷԹՏ) , որը զբաղեցնում է 170 000 քառակուսի կիլոմետր տարածք և ներառում Ադրբեջանի, Վրաստանի, Իրանի, Ռուսաստանի և Թուրքիայի որոշ տարածքներ: ԷԹՏ-ը կարևոր նշանակություն ունի մի քանի սահմանափակ տեսակների, ինչպես նաև գիշատիչների բազմացող պոպուլյացիաների համար, և այն արտացոլում է Կովկասի, որպես թռչունների էնդեմիզմի կենտրոնի կարևորությունը: Հայաստանը կարևոր բնակավայր է նաև շատ չվող թռչնատեսակների, հատկապես չվող գիշատիչ թռչունների համար՝ ծառայելով որպես Աֆրիկայի և Եվրոպայի միջև միջազգային չվուղի:

Հայաստանի ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը և տեղաբաշխումը պայմանավորված է երկրի աշխարհագրական դիրքով, վերընթաց գոտիականությամբ ու տարածքի ռելեֆային բազմազանությամբ, որի շնորհիվ յուրաքանչյուր գոտու կենսաբազմազանությունը բնորոշվում է յուրօրինակ տեսակային կազմով, որակական ու քանակական ցուցանիշներով: Հայաստանում ձևավորված լանդշաֆտակլիմայական տարբեր գոտիներին բնորոշ պայմանները նպաստել են բուսական ու կենդանական տեսակների աճելավայրերի և ապրելավայրերի բազմազանության առաջացմանը, որի արդյունքում առկա են՝ ինքնատիպ համակեցություններ, էնդեմիզմի բարձր մակարդակ և հարուստ ագրոկենսաբազմազանություն:

Երկրի ոչ մեծ տարածքում (մոտ 30 հազ.կմ²) աճում են շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսեր, 428՝ հողային և ջրային ջրիմուռներ, 399՝ մամուռներ, 4207՝ սնկեր, 464՝ քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակի անողնաշար կենդանիներ: Հայաստանի կենսաբազմազանությունն աչքի է ընկնում բարձր էնդեմիզմով՝ մոտ 500 կենդանատեսակ (ֆաունայի շուրջ 3 %-ը) և 144 բուսատեսակ (ֆլորայի 3.8 %-ը), որոնք համարվում են Հայաստանի էնդեմիկներ: Բարձրակարգ

բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000 կմ² տարածքում աճում է մոտ 107 տեսակ:

Մոտեցում և մեթոդներ

Հայաստանի բնակչության բարեկեցությունը մեծապես կախված է կենսաբանական պաշարների առկայությունից, որոնք, երկրի համար հանդիսանում են ռազմավարական ռեսուրսներ:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը կրող կենսաբազմազանության և էկոհամակարգերի մասին տվյալները հավաքագրվել և մշակվել են հիմնվելով կենսաբազմազանության վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից: Հավաքվել և վերլուծվել է ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալ շրջանին վերաբերող համարյա ամբողջ գիտական տեղեկատվությունը: Որից հետո համապատասխան մասնագետների կողմից իրականացվել է այցելություն նախատեսվող գործունեության տարածք ֆլորայի և ֆաունայի արդի վիճակը գնահատելու համար: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ շրջանին բնորոշ ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բույսատեսակների և կենդանատեսակների առկայությանը և անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների մշակմանը:

«Տարածաշրջանում գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքների հիմնական մասը ընդգրկված է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կազմում, որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1465-Ն որոշմամբ: Էլեկտրամատակարարման և օպտիկամանրաթելային օդային գծերի և անկացման տարածքները համընկնում է «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի» ՊՈԱԿ-ի «Արևիք» մասնաճյուղի «Արևիք» ազգային պարկի տարածքների հետ, ինչը հավաստում է Շրջակա միջավայրի նախարարությունից 09.07.2019թ ստացված 5/22.3/51715 գրությունը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներում հողամասերի օգտագործումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Շրջակա միջավայրի նախարարությունը, որը հանդիսանում է պահպանվող տարածքների քաղաքականության մշակման լիազոր մարմինը, սահմանված կարգով պետք է ապահովի նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացը՝ մինչև նախատեսվող գործունեության իրականացումը, ինչը հաշվի է առնվելու նախագծողի կողմից:

Շրջակա միջավայրի կենսաբազմազանության նկարագրությունը ներկայացնելու համար հիմք է ընդունվել «Արևիք» ազգային պարկի, մասնավորապես Շվանիձոր համայնքի շրջակա տարածքների մասին առկա տվյալները:

Նորմատիվ իրավական հիմքեր

1. Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք (1999թ.)
2. Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք (2000թ.)
3. Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք (2006թ.)
4. Անտառային օրենսգիրք (2005թ.)
5. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N71-Ն որոշում, 29.01.2010թ.
6. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 72-Ն որոշումը, 29.01.2010թ
7. ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 781-Ն որոշումը (2014 թ.)
8. «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը հաստատելու մասին» 25.09.2014թ. N 1059 որոշում
9. «Արևիք» ազգային պարկ ստեղծելու, «Արևիք» ազգային պարկի և «Արևիք» ազգային պարկ» պետական ոչ առեվտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 15-ի N 1209 որոշում
10. «Շիկահող» պետական արգելոց» և «Արևիք» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առեվտրային կազմակերպություն ստեղծելու, ինչպես նաև «Խուստուփ» պետական արգելավայր ստեղծելու, «Խուստուփ» պետական արգելավայրի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 19 դեկտեմբերի 2013 թվականի N 1465-Ն որոշում
11. <<Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 14.08.2008թ. N 967-Ն որոշում

Միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ

12. «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)

13. «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթոշունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
14. «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
15. «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
16. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Բնության հատուկ պահպանվող տարածքները (այսուհետ՝ ԲՀՊՏ) բնական միջավայրի, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության, կենսոլորտի բնական վիճակի հավասարակշռության պահպանության ավանդական և արդյունավետ միջոցներից են: ԲՀՊՏ-ների ներկա համակարգի պահպանումն ու զարգացումը հանդիսանում է Հայաստանի բնապահպանական քաղաքականության իրականացման, ինչպես նաև երկրի կայուն և երկարաժամկետ զարգացման կարևոր բաղադրիչն ու երաշխիքը: Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը նպատակաուղղված են այդ քաղաքականության իրականացմանը և դրանից բխող առաջնահերթությունների ու գործողությունների սահմանմանը:

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ 60%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Սյունիքի մարզը, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը, ունի ԲՀՊՏ-ների բավականաչափ զարգացած և խիտ ցանց: Մարզում առկա ԲՀՊՏ-ները ներկայացված են ստորև.

1. «Զանգեզուր» պետական արգելավայր
2. «Արևիք» ազգային պարկ
3. «Շիկահող» պետական արգելոց
4. «Գորիսի» պետական արգելավայր
5. «Սև լիճ» պետական արգելավայր
6. «Սոսո պուրակ» պետական արգելավայր
7. «Բողաքարի» պետական արգելավայր
8. «Խուստուփ» պետական արգելավայր

«Արևիք» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 15-ի N 1209 որոշմամբ՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /2006թ/ 5-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ ու 13-րդ հոդվածներին համապատասխան:

«Արևիք» ազգային պարկի ստեղծման հիմնական նպատակը Զանգեզուրի լեռնաշղթայի Մեղրի լեռնաբազուկի հարավային լանջերի, ինչպես նաև Մեղրի, Շվանիձոր և Նյուվադի գետերի ջրհավաք ավազանների տարածքներում բնական էկոհամակարգերի, դրանց կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության, բնական պաշարների, բնության եզակի հուշարձանների, էնդեմիկ և հազվագյուտ կենդանիների միջսահմանային բնակմիջավայրերի պահպանությունը, բնականոն զարգացումը և վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելն է:

«Արևիք» ազգային պարկի ընդհանուր տարածքում ներառվել են՝ Մեղրիի անտառտնտեսության, Լիճքի անտառպետության 11914 հա և Շվանիձորի անտառպետության 14512 հա համապատասխան հողատարածքները, նույն թվում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1989 թվականի օգոստոսի 10-ի N 400 որոշմամբ ստեղծված «Բողաքար» (2728 հա) պետական արգելավայրը, ինչպես նաև «Արևիք» ազգային պարկի ամբողջականությունը ապահովող Սյունիքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքները՝ 7975.8 հա ընդհանուր մակերեսով:

Կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի N 1465-Ն որոշման համաձայն «Շիկահող» պետական արգելոց պետական ոչ առևտրային կազմակերպության և «Արևիք» ազգային պարկ պետական ոչ առևտրային կազմակերպության միաձուլման և վերակազմակերպման ձևով ստեղծվել է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր պետական ոչ առևտրային կազմակերպությունը ներառելով «Արևիք» ազգային պարկը, «Շիկահող» պետական արգելոցը, «Մոսու պուրակ», «Զանգեզուր», «Իստատուլի», «Բողաքար» և «Սև լիճ» պետական արգելավայրերը:

«Արևիք» մասնաձյուղը ներառում է 2 տեղամաս՝ «Արևիք» ազգային պարկ տեղամաս և «Բողաքար» պետական արգելավայր տեղամաս:

«Արևիք» ազգային պարկի տարածքում նախատեսվող գործունեության իրականացումն ունի իր կարևորությունը, քանի որ բջջային և ինտերնետ կապի հասանելիության ապահովումը կարող է նպաստել ազգային պարկում պահպանության և այլ աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

- **Էկոհամակարգերը**

Ազգային պարկի տարածքը տիպիկ լեռնային է, լանդշաֆտների և բուսական աշխարհի բազմազանությունը պայմանավորված է յուրահատուկ բնակլիմայական պայմաններով: Տարածքը ներկայացվում է Մեղրիի ֆլորիստիկ շրջան, որտեղ հանդիպում են հազվագյուտ և անհետացող 115 տեսակներ:

Բուսականության տարածումը հիմնականում պայմանավորված է բարձունքային գոտիականությամբ, իրար հաջորդում են կիսաանապատային, լեռնաանապատային, լեռնատափաստանային, մարգագետնատափաստանային, մերձալպյան և ալպյան լանդշաֆտները /բուսական տիպերը/: Մեղրիի տարածաշրջանի ցածրադիր հատվածներում մինչև 800-1000մ բարձրության զառիթափ, քարքարոտ լանջերին առկա է կիսաանապատային գոտու լեռնային չորասեր (ֆրիգանոիդ) բուսականության տիպը:

Մեղրի, Ագարակ և Նոնաձոր համայնքները գտնվում են օշինդրային կիսաանապատային գոտում, որտեղ բուսականությունը ներկայացված է ֆրիգանոիդ համակցություններով՝ օշինդր բուրավետ (*Artemisia fragrans*) տեսակի գետակշռությամբ: Գարնանը կիսաանապատները ծածկվում են էֆեմերներով (*Ceratocephala falcata*, *Anisantha tectorum* և այլն):

Տափաստանները բավականին փոքր տարածքներ են զբաղեցնում և հիմնականում ներկայացված են շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*), խոզանափուշ Լոմակինի (*Cousinia lomakinii*), լայնատերև օրինված (*Cnicus benedictus*), կոլրաուշիա ընդյուղակիր (*Kohlrauschia prolifera*), ցաքի փշոտ (*Paliurus spina-christi*) և այլն:

Քարասեր բուսականությունը շատ հարուստ է և զբաղեցնում է բավականին մեծ տարածքներ: Ազգային պարկում հանդիպող հազվագյուտ և վտանգված տեսակների մեծ մասը հանդիպում է հենց այս աճելավայրերում: Օրինակ՝ մկնասոխ Միսչենկոյի (*Scilla mischtschenkoana*), վավիլովիա նրբագեղ (*Vavilovia formosa*), իլաձաղիկ Թախտաջիանի (*Scrophularia takhtajanii*), վարդակակաչ Սոսնովսկու (*Tulipa sosnovskyi*), գնդապտուղ կասպիական (*Physoptychis caspica*) և այլն:

Ազգային պարկի տարածքը ծածկված է լայնատերև անտառներով, գլխու նոսրանտառներով, լայնատերև տեսակների նոսր չորասեր անտառներով:

Բուսական աշխարհ

«Արևիք» ազգային պարկի տարածքներում համաձայն «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը հաստատելու մասին» 25.09.2014թ. N 1059 որոշման, հաշվարկված են ընդհանուր 1462 բարձրակարգ բույսեր, որոնցից 24-ը գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Սակայն վերջին տարիներին անցկացված ուսումնասիրությունների արդյունքում վերոնշյալ թվերը ենթարկվել են որոշակի փոփոխությունների: Դաշտային ուսումնասիրության արդյունքներով «Արևիք» ազգային

պարկում և պահպանման գոտու տարածքներում նշված են բարձրակարգ բույսերի 1474 տեսակներ, որից 68-ը գրանցված է ՀՀ բույսերի Կարմիր գրքում:

Ազգային պարկի տարածքում ներկայացված են հանրապետության անտառային դենդրոբազմազանության մեջ ամենահարուստ տեսակային կազմ ունեցող ցեղերը (տանձենի, արոսենի, ուռենի, չմենի, գազ և այլն): Առկա է արիդային նոսրանտառների (լայնատերև և ասեղնատերև տեսակների) լայն տարածվածություն՝ գրեթե բոլոր չորադիմացկուն տեսակները, այդ թվում՝ գիհու 5 տեսակներ: Կաղնու բոլոր տեսակները մասնակցում են ծառուտների կազմավորմանը: Զանգեզուրի անտառներում (թեկուզ և քիչ քանակությամբ) առկա են ռելիկտային տեսակները (ձեկվա բոխատերև, շագանակենի սովորական, կենի հատապտղային): Առկա է նաև Կովկասի տարածաշրջանում արևելյան սոսու ամենախոշոր ծառուտին: Ազգային պարկը աճելավայր է հանդիսանում մի շարք հազվագյուտ և բարձրարժեք ծառաբույսերի (Հուդայածառ գրիֆիտի, էֆեդրա երկկհասկավոր, պայթակենի Կոմարովի, բարդի եփրատյան, ինչպես նաև տանձենու, մասրենու, մոշենու, արոսենու, սգնու բազմաթիվ տեսակներ): Անտառային տարածքներում և խոնավ մարգագետիններում աճում է խոլորձի ավելի քան 20 տարբեր տեսակ:

Այստեղ աճում են բարդածաղկավորների ընտանիքին պատկանող բազմաթիվ հազվագյուտ և վտանգված տեսակներ: «Արևիք» ազգային պարկի տարածքում հանդիպում է Հայաստանի էնդեմ տերեփուկ Ալեքսանդրի (*Centaurea alexandrii*) (EN): Անդրկովկասի էնդեմներ՝ Տերեփուկ Շելկովնիկովի (*Centaurea schelkovnikovii*) (CR), խոզանափուշ Լոմակինի (*Cousinia lomakinii*), խոզանափուշ երևանյան (*Cousinia erivanensis*) (EN) և խոզանափուշ մեդրիի (*Cousinia megrica*) (EN), խոզանափուշ դարադաղի (*Cousinia qaradaghensis*, CR) տեսակները: Ազգային պարկի տարածքում՝ ցածրադիր լեռնային գոտու քարքարոտ լանջերին, կարելի է հանդիպել յուրինեսա նրբագեղ (*Jurinea elegans*) (EN) տեսակը:

«Արևիք» ազգային պարկի տարածքում հանդիպում են բազմաթիվ վայրի բակլազգիներ: Տարածքում հանդիպում է Արգիրոլոբիում հաղհամեմավոր (*Argyrolobium trigonelloides*) (EN), գազ Օրդուբադի (*Astragalus ordubadensis*) (CR), պայթակենի Կոմարովի (*Colutea komarovii*) (CR) տեսակները:

«Արևիք» ազգային պարկի տարածքում հանդիպում են վայրի պտղատու ծառերի և թփերի մի շարք տեսակներ, նոնենին (*Punica granatum*), թզենին (*Ficus carica*), վայրի նշենու տեսակներ (*Amygdalus fenzliana*, *A. nairica*, EN), վայրի պիստակենին (*Pistacia mutica*), վայրի սալորենու և բալի տեսակներ (*Cerasus avium*, *C. mahaleb*, *C. incana*, *C. microcarpa*, *Pranus divaricata*), վայրի տանձենու ավելի քան 20 տեսակ (*Pyrus caucasica*, *P. elata* (EN), *P. megrica*, *P. zangezura* և այլն), մոշի տեսակներ (*Rubus armeniacus*, *R. cartalinicus*, *R. sanctus* և այլն):

Այստեղ աճում են հիրիկի (*Iris caucasica*, *I. grossheimii* (EN), *I. pseudocaucasica* (EN), *I. imbricata* և այլն) և վարդակակաչի (*Tulipa confuse* (EN), *T. florenkyi* (EN), *T. sosnowskyi* (EN)) բազմաթիվ տեսակներ, թրաշուշանի 3 տեսակ (*Gladiolus atroviolaceus*, *G. italicus*, *G. szovitsii* (EN)): Հիրիկ Գրոսհեյմի (*Iris grossheimii*), Վարդակակաչ Ֆլորենսկու (*Tulipa florenskyi*), Թրաշուշան Շովիցի (*Gladiolus szovitsii*), Նշենի նաիրյան (*Amygdalus nairica*) (EN), Հուդայածառ Գրիֆիթի (*Cercis griffithii*) (CR), Աստերոլինոն աստղաձև (*Asterolinon linum-stellatum*) (CR), մկնաստի Միշչենկոյի (*Scilla mischtschenkoana*, EN), Իննաքիսս պարսկական (*Enneapogon persicus*, VU) տեսակները:

Արաքս գետի երկայնքով հանդիպող գեղմնախոտ ռավենյանը (*Erianthus ravennae*, VU): Իմպերատա զլանաձև (*Imperata cylindrica*) բույսը Հայաստանում աճում է միայն Արաքս գետի երկայնքով՝ Մեղրու ֆլորիստական շրջանում: Արաքս գետի ջրաբերուկների վրա աճում է վայրի ձմերուկը (*Citrullus colocynthis*, CR):

Կաղնու նոսրանտառներում հանդիպում են արաքսյան կաղնին (*Quercus araxina*) և խոլորձի մի շարք հազվագյուտ տեսակներ: Առավել մեզոֆիլ անտառներում աճում են խազեզ յուրահատուկ (*Allium paradoxum*) և սագասոխուկ Ելենայի (*Gagea helенаe*) տեսակները, տարածված է նաև վրացական կաղնին (*Quercus iberica*): Դենդրոֆլորայի հազվագյուտ և անհետացող տեսակներից Շոբերի բորակաթուփը (*Nitraria schoberi*, EN), կիսազնդաձև մասրենին, ոլորնածառը, թախտաջյանի և սուր սոնգավոր տանձենիները, Կոմարովի պայթակենին (*Colutea komarovii*, CR): Մեղրու միջին և վերին լեռնային գոտիների (1300-1500 մ) արիդային նոսրանտառներում հազվադեպ հանդիպում է հայկական սզնին (*Crataegus armena*): Տանձենու էնդեմ տեսակներից՝ տանձենի բարձր (*Pyrus elata* EN, Հայաստանի էնդեմ) և տանձենի Ռադդեի (*P. raddena*, EN, հարավային Անդրկովկասի էնդեմ), խիստ սահմանափակ քանակությամբ աճում են միջին գոտուց մինչև բարձր լեռնային գոտու անտառեզրերին: Տանձենի խառնվածը (*P. complexa*, EN, Հայաստանի էնդեմ), Վորոնովի տանձենին (*P. voronovii*, EN, Հայաստանի էնդեմ) հանդիպում է ստորին և միջին լեռնային գոտում, հիմնականում անտառեզրերին: Ստորին, միջին և վերին լեռնային գոտիների անտառեզրերին աննշան տարածություն զբաղեցնող նշենի Նաիրյանի (*Amygdalus nairica*, EN, հարավային Անդրկովկասի էնդեմ): Միջին լեռնային գոտու չոր քարքարոտ լանջերին հանդիպում է արևելյան մասրենին (*Rosa orientalis*): Սարի չամիչ նարնջագույնը (*Ephedra aurantiaca*) աճում է հիմնականում ներքին լեռնային գոտու ավազոտ, քարքարոտ և խճաճածկ լանջերին: Անդրկովկասյան դեղնածաղիկը (*Genista transcaucasica*) նույնպես սահմանափակ քանակությամբ է հանդիպում ստորինից մինչև միջին լեռնային գոտու թփուտներում, գետափերին, խոնավ վայրերում: Տարածված են նաև՝ հազազ սեղմված (*Lycium depressum*), գազ մանրազլիսիկ (*Astragalus microcephalus*), զիհի կազակական և գ. ցածրաձ (*Juniperus sabina*, EN, *J. depressa*), գլոենի սովորական (*Mespilus germanica*), ծորենի արևելյան (*Berberis orientalis*):

Ստորինից մինչև վերին լեռնային գոտիներում աճում են՝ կատվադաղձ խոշորածաղիկ և կ Մեյերի (*Nepeta grandiflora*, *N. meyeri*), դաշխակտավատ վրացական (*Lallemanta iberica*), խուլեղինջ ցողունագիրկ և խ. մուգ կարմրի (*Lamium amplexicaule*), աղավնիճ դեղատու (*Verbena officinalis*), մեղրածուծ պարսկական (*Marrubium persicum*), երնջա Բալանզի (*Sideritis balansae Boiss.*), եղեսպակ կանաչ (*Salvia viridis*) և այլ տեսակներ:

«Արևիք» ազգային պարկի տարածքում աճող լիանաներից են հոտոտ արևելյանը (*Clematis orientalis*) և շրջահյուս հունականը (*Periploca graeca*):

«Կարմիր գրքում գրանցված որոշ տեսակներ աճում են միայն Մեղրու ֆլորիստիկ շրջանում՝ չորապտեր արծվապտերային (*Cheilanthes Pteridioides*), անդրախնե կլորատերև (*Andrachne rotundifolia*), անմոռուկ ցեղակից (*Myosotis propinqua*), եղբորոսին քրդական (*Cephalanthera kurdica*), Իննաքիստ պարսկական (*Enneapogon persicas*), գեղմնախոտ ոսվենյան (*Erianthus ravennae*), մերկապոչուկ թեքահասկ (*Psilurus incurvus*):

Տարածքում աճում է նաև Հայաստանի էնդեմ տեսակներ, ինչպես օրինակ մշակաբույսերի վայրի ցեղակիցներ՝ տանձենիններ, սոխեր, գեղազարդ տեսակներ՝ շնդեղ Նինայի, տերեփուկ Ալեքսանդրի):

Շվանիձոր համայնքի շրջակայքում հանդիպում են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները՝ Նվիկ կոնոֆալոսային (*Arum conophalloides* (EN)), Վաղենակ պարսկական (*Celendula persica* (EN)), Տերեփուկ Ալեքսանդրի (*Centaurea alexandrii* (EN)), Ոզնագլխիկ բազմատուն (*Echinops polygamous* (EN)), Յուրինեա նրբագեղ (*Jurinea elegans* (EN)), Զուվանդա Մեյերի (*Zuvanda meyeri* (EN)), Հուդայածառ Գրիֆիթի (*Cercis griffithii* (CR)), Վարդակուկ պարսկական (*Rosularia persica* (CR)), Արգիրոլոբիում հաց համեմավոր (*Argyrolobium trigonelloides* (EN)), Թրաշուշան Շովիցի (*Gladiolus szovitsii* (EN)), Վարդակակաչ Ֆլորենսկու (*Tulipa florenskyi* (EN)), Խոլորձ կետավոր (*Orchis punctulata* (VU)), Խոլորձ Ստենվենի (*Orchis stevenii* (EN)), Խոնդատ Մեղրու (*Verbascum megricum* (EN)), Գազ Կիրպիչնիկովի (*Astragalus kirpicznikovii*), Հիրիկ կեղծ կովկասյան/ *Iris pseudocaucasica* Grossh., Խոլորձ Ստենի/ *Orchis stevenii* Rchb.f., Յուրինեա նրբագեղ/*Jurinea elegans* (Stev.)DC և այլն: /Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվության հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը/:

Կենդանական աշխարհը

Կենդանական աշխարհի տեսակային կազմը ձևավորվել է Իրանական, Անատոլական, Կովկասյան, մասամբ նաև միջին Ասիական կենսաաշխարհագրական մարզերի ազդեցությամբ: Այդ պատճառով մասնավորապես Մեղրու տարածաշրջանի կենդանական աշխարհը բացառիկ բազմազան է: Այստեղ հանդիպում են հայկական մուֆլոնը, բեզոարյան այծը, առաջավորասիական հովազը:

Յուրաքանչյուր բուսական գոտի ունի իր յուրահատուկ կենդանական աշխարհը: Միննույն ժամանակ, կենդանիների որոշ տեսակներ էկոլոգիական ճկուն հարմարվողականության շնորհիվ հանդիպում են գրեթե բոլոր լանդշաֆտային գոտիներում: Այդպիսիք են օրինակ, նապաստակը, գորշ արջը, աղվեսը, գայլը, դաշտամկների որոշ տեսակներ, իսկ թռչուններից՝ ճնճղուկը, լորը, կաքավը, արծիվների և բազենների մի շարք տեսակներ:

Էկոհամակարգերի բազմազանության շնորհիվ ազգային պարկը առանձնանում է ողնաշարավոր և անողնաշար կենդանիների յուրահատկությամբ և շատ մեծ տեսակային բազմազանությամբ: Համաձայն «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը հաստատելու մասին» 25.09.2014թ. N 1059 որոշման, հաշվարկված են ողնաշարավոր կենդանիներ, ընդհանուր 253, որից 28-ը Կարմիր գրքային և անողնաշարավոր կենդանիներ 528, որից 32-ը Կարմիր գրքային: Սակայն ինչպես բույսերի, այնպես էլ կենդանիների դեպքում, վերջին տարիներին անցկացված ուսումնասիրությունների արդյունքում վերոնշյալ թվերը ենթարկվել են որոշակի փոփոխությունների:

Միջատների ուսումնասիրված խմբերից տարածքում հանդիպում են գնայուկ բզեզների (*Carabidae*) ավելի քան 90, ոսկերգեզների (*Buprestidae*) 107 և երկարաբեղիկների (*Cerambycidae*) 82 տեսակ, ցերեկային թիթեռների (*Lepidoptera-Rhopalocera*)՝ մոտ 150 տեսակ և մրջյունները (*Formicidae*)՝ 59 տեսակ: Փափկամարմինների (*Mollusca*) ֆաունան ավելի պակաս է ներկայացված՝ մոտ 40 տեսակ:

Անողնաշարավորների Ֆաունան հարուստ է էնդեմիկ տեսակներով: Մասնավորապես *Phytodrumadusa armeniaca* (ծղրիդներ), *Nocarodes armenus* (մորեխներ), *Dictyla subdola* (փայտոջիլ), *Amphicoma eichleri*, *Cantharis araxicola* (բզեզներ), *Tomomyza araxana*, *Bombilius schelkovnikovi* (երկթևանիներ), *Shadinia akramowskii*, *Gabbiella araxena*, *Pupilla bipapulata* (փափկա-մարմիններ), *Zodarion petrobium* (սարդեր) և այլ տեսակներ: Այստեղ պահպանվում են Հայաստանի Կարմիր գրքում գրանցված անողնաշարների 40 տեսակ, այդ թվում փափկամարմինների 2, ճպուռների 3, ուղղաթևների 2, բզեզների 13, թեփուկաթևների 16, թաղանթաթևների 5 և երկթևների 1 տեսակ: Ազգային պարկի տարածքում հանդիպում են Հայաստանի Կարմիր գրքում գրանցված բոլոր երեք առազաստաթիթեռները՝ մենեոզինան կամ սև ապոլոնը (*Parnassius mnemosyne rjabovi*) (VU), ապոլոնը (*Parnassius apollo kashtshenkoi*) (VU) և ալեքսանոր առազաստաթիթեռը (*Papilio alexanor orientalis*) (VU), ինչպես նաև ավրորինա դեղնաթիթեռը (*Colias aurorina*) (VU), աֆրիկական փրոթերեբիան (*Proterebia afra hyrcana*) (VU), Ռոմանովի թոմարեսը (*Tomares romanovi*) (VU), ալկոն (*Maculineaalcon monticola*) (VU), արիոն (*Maculinea arion*

zara) (VU), և անդրկովկասյան (*Plebejus transcaucasicus*) (EN, Կովկասի տարածաշրջանի էնդեմիկ) կապտաթիթեռները:

«Արևիք» ազգային պարկում հանդիպում է 24 ձկնատեսակ, էնդեմիկ 1 ձկնատեսակ, Կարմիր գրքում՝ 4 ձկնատեսակ: Մեղրի գետի վերին հոսանքում, Մեղրի գետի ձախակողմյան վտակներում՝ Տաշտունում, Գոգ-գոգում, Վանքում, Վարդանիձորում, ինչպես նաև առանձին գետակների՝ Նյուվաղիի, Շանգուրի, Շվանիձորի վերին հոսանքներում բնակվում են տեղաբնակ 4 ձկնատեսակ՝ կարմրախայտ (*Salmo trutta fario*), արևելյան տառեխիկ (*Alburnoides eichwaldii*), կողակ (*Capoeta sp.*), քուռի բեղուն (*Barbus lacerta cyri*): Նշված բոլոր ձկնատեսակներն էլ ազգային պարկի գետերում հանդիպում են ոչ մեծ քանակներով, իսկ կողակը՝ հազվադեպ: Մեղրի գետի ստորին հոսանքում և այդ գետի ստորին հոսանքում գտնվող լճակում, բացի վերոգրյալ ձկնատեսակներից, հանդիպում են նաև ծածանը (*Cyprinus carpio*) /սակավաթիվ է/, արծաթափայլ կարասը (*Carassius auratus gibelio*)/բազմաքանակ է/, լոքոն (*Silurus glanis*) /հազվադեպ է/, քուռի լերկաձուկը (*Oxynemacheilus brandti*), ծիածանախայտը (*Parasalmo mykiss*) /պատահաբար/: Վերոգրյալ ձկնատեսակներից կարմրախայտը, հաշամը, լոքոն, ծածանը, մուրծին, ճանարը, քուռի բեղուն, կողակները, սուդակը, ենթաբերանը իրենցից ձկնորսության օբյեկտ են ներկայացնում և որպես սնունդ բարձր են գնահատվում տեղի բնակչության կողմից:

Երկկենցաղները ներկայացված են 4 տեսակներով: Սովորական հանդիպող տեսակների թվին են պատկանում՝ կանաչ դոդոշը (*Bufo viridis*), լճագորտը (*Pelophilax ridibundus*), փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*): Փոքրասիական ծառագորտը (*Hyla savignyi*) համեմատաբար հազվադեպ է հանդիպում գետերի հունների ճահճացած բուսականությունով ծածկված տեղամասերում:

Սողունների ֆաունան ներկայացված է 34 տեսակներով (15 տեսակի մողեսներ, 16 տեսակի օձեր և 3 տեսակի կրիաներ): Սողունների սովորական հանդիպող տեսակներից են՝ կովկասյան ազաման (*Laudakia caucasia*), ադրբեջանական ժայռային մողեսը (*Darevskii raddei*), միջին մողեսը (*Lacerta media*), դեղնափորիկը (*Psiudopus apodus*), բարեկազմ օձագլուխը (*Ophisops elegans*), որդանման կույր օձը (*Typlops vermicularis*), սովորական (*Natrix natrix*) և ջրային (*Natrix tessellata*) լորտուները, կապարագույն սահնօձը (*Hemorrhoids nummifer*), հայկական էրենիսը (*Eirenis punctatolineatus*), վզնոցավոր էրենիսը (*Eirenis collaris*), գյուրզան (*Vipera (Macrovipera) Iebetina*): Կարմիր գրքում գրանցված 9 տեսակներից են՝ միջերկրածովային կրիան (*Testudo graeca*) (VU), անդրկովկասյան մողեսիկ (*Eremias pleskei*) (CR), երկարատու սցինկը (*Eumeces schneideri*) (VU), առաջավորասիական մաքույան (*Trachylepis septemtaeniata*) (VU), կատվաօձը (*Telescopus fallax*) (VU), անդրկովկասյան սահնօձը (*Zamenis hohenackeri*) (VU), սևագլուխ ոինխոկալամոսը (*Rhynchocalamus melanocephalus*) (VU), պարսկական

պսեվդոցիկլոֆիսը (*Pseudocyclophis persicus*) (CR) և հայկական իծը (*Montivipera raddei*) (VU):

«Արևիք» ազգային պարկում հայտնաբերվել է թռչունների ավելի քան 140 տեսակ, որոնցից առնվազն 137-ը այստեղ բնադրում են: «Արևիք» ազգային պարկում հանդիպող թռչունների 28 տեսակ գրանցվել են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում, իսկ դրանցից 6-ը՝ ԲՊՄՄ կարմիր ցուցակում: Այստեղ հանդիպում են տարբեր թռչուններ՝ Շիկապոչ քարաթռչնակը (*Oenanthe chrysopygia*) (EN) և անապատային կաքավը (*Ammoperdix griseogularis*) (VU), կովկասյան փասիանը (*Phasianus colchicus*), թուրաջը (*Francolinus francolinus*), քարակաքավը (*Alectoris chukar*), ներկարարը (*Coracias garrulus*) (VU), ոսկեգույն մեղվակերը (*Merops apiaster*), դաշտային ձիաթռչնակը (*Anthus campestris*), սևախայտ քարաթռչնակը (*Oenanthe hispanica*), անապատային մորեհավը (*Hippolais languida*), մորու շահրիկը (*Sylvia curruca*), երգող շահրիկը (*Sylvia crassirostris*), կարմրակատար շամփրուկը (*Lanius senator*) (VU), կանեփնուկը (*Carduelis cannabina*), սևագլուխ դրախտապանը (*Emberiza melanocephala*), կարճամատ ճնճղուկը (*Carpospiza brachydactyla*): Գիհու նոսրանտառները ազգային պարկում զգալի տարածքներ են զբաղեցնում: Այնտեղ բնակվում են անտառային աղավնին (*Columba palumbus*), սովորական տատրակը (*Streptopelia turtur*), այծկիթը (*Caprimulgus europaeus*), անտառային արտույտը (*Lullula arborea*), սոսնձակեռնեխը (*Turdus viscivorus*), սպիտակախածի կեռնեխը (*Turdus torquatus*), կարմրաճակատ սերինոսը (*Serinus pusillus*) և լեռնային դրախտապանը (*Emberiza cia*): Հայաստանում միայն այստեղ է հայտնաբերվել հազվագյուտ միջերկրածովյան երաշտահավը (*Parus lugubris*) (VU), Եվրոպական ճնճղաճուռակը (*Accipiter brevipes*)(VU), անապատային կաքավը (*Ammoperdix griseogularis*) (VU), վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*) (VU), կարմրաթև մագլցողը (*Tichodroma muraria*) (DD), կովկասյան մայրեհավը (*Tetrao mlokosiewiczi*) (VU) և միջերկրածովյան երաշտահավը (*Parus lugubris*) (VU):

«Արևիք» ազգային պարկը կաթնասուններով ամենահարուստ պահպանվող տարածքն է Հայաստանում, ի շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, որը ապահովում է եվրոպական և ասիական տեսակների համատեղ գոյատևումը: Սովորական և ամենուրեք տարածված տեսակներից են եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*), սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), Դաղստանի դաշտամուկը (*Microtus daghestanicus*), փոքրասիական համստերը (*Mesocricetus brandti*), մակեդոնական մուկը (*Mus macedonicus*), աղվեսը (*Vulpes vulpes*), քարակզաքիսը (*Martes foina*), գորշուկը (*Meles canescens*) և աքիսը (*Mustela nivalis*): Միջատակերներից լայն տարածում ունեն սպիտակափոր ոզնին (*Erinaceus concolor*), սպիտակափոր սպիտակատամը (*Crociodura leucodon* = *C. persica*), փոքր սպիտակատամը (*Crociodura suaveolens* = *C. gueldenstaedtii* = *C. dinniki*) և Վոլնուխինի գորշատամը (*Sorex volnuchini*): Ցածրադիր կիսաանապատային

գոտում տարածված են լայնականջ ոզնին (*Hemiechinus auritus*), պարսկական ավազամուկը (*Meriones persicus*), փոքրասիական ավազամուկը (*Meriones tristrami*), Վինոգրադովի ավազամուկը (*Meriones vinogradovi*), շնագայլը (*Canis aureus*) և հավանաբար խայտաքիսը (*Vormela peregusna*): Եղեգնակատուն (*Felis chaus*) գրանցվում է չոր նախալեռներից մինչև անտառի վերին սահմանը: 2010 թ-ին այստեղ՝ ավելի քան 60 տարվա ընթացքում տվյալների բացակայությունից հետո հայտնաբերվել է գոլավոր բորենին (*Hyaena hyaena*): Գիհու չոր նոսրանտառներում և լայնատերև անտառներում, հատկապես՝ «Շիկահող» արգելոցին կից Մեղրու լեռնաշղթաի վերևի մասերում և Զանգեզուրի լեռնաշղթայում գրանցում են անտառային քնամուկը (*Dryomys nitedula*), պոլչուկը (*Glis glis*), դեղնակուրծք մուկը (*Apodemus ponticus*), փոքր անտառային մուկը (*Apodemus uralensis*), տափաստանային կատուն (*Felis silvestris ornata*), անտառակատուն (*Felis silvestris silvestris*), լուսանը (*Lynx lynx*), գայլը (*Canis lupus*), գորշ արջը (*Ursus arctos*), այծյամը (*Capreolus capreolus*) և վայրի խոզը (*Sus scrofa*): Անտառային զանգվածներում գտնվող մեծ և իրար հետ կապակցված ժայռոտ վայրերում և քարքարոտ սարալանջերում պահպանվել են կովկասյան ընձառյուծը (*Panthera pardus ciscaucasica* = *P.p. saxicolor*), բեզուարյան այծը (*Capra aegagrus*), ձնային դաշտամուկը (*Chionomys nivalis*) և լայնորեն տարածված է հնդկական մացառախոզը (*Hystrix indica*): Շատ հազվադեպ հարակից տարածքներից և «Շիկահող» արգելոցից կարող են ներթափանցել ազնվացեղ եղջերուները (*Cervus elaphus maral*):

Բավականին բազմազան է չղջիկների ֆաունան: Ամենուրեք տարածված են մեծ պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus ferrumequinum*), փոքր պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus hipposideros*) և գաճաճ փոքրաչղջիկը (*Pipistrellus pygmaeus*): Անտառաշատ վայրերում գրանցվում են փոքր իրիկնաչղջիկը (*Nyctalus leisleri*), շիկակարմիր իրիկնաչղջիկը (*Nyctalus noctula*) և անտառային կամ Նատուզիոսի փոքրաչղջիկը (*Pipistrellus nathusii*): Ջրի մոտ և Արաքս գետի հովտում գրանցվում են անապատի կամ Օգնևի մաշկեղ չղջիկը (*Eptesicus bottae*), բեղավոր գիշերաչղջիկը (*Myotis mystacinus*), Նատերերի գիշերաչղջիկը (*Myotis nattereri*), արաքսյան գիշերաչղջիկը (*Myotis araxenus* = *M. schaubi* = *M. nattereri araxenus*): Ցածրադիր կիսասանապատային գոտում հանդիպում է մոխրագույն ականջեղ չղջիկը (*Plecotus austriacus*): Շինություններում թաքնվում են ուշաթոխք մաշկեղ չղջիկը (*Eptesicus serotinus*), թզուկ փոքրաչղջիկը (*Pipistrellus pipistrellus*), Կուլի փոքրաչղջիկը (*Pipistrellus kuhli*), մաշկեղակերպ փոքրաչղջիկը (*Pipistrellus* (= *Hypsugo*) *savii*) և երկգույն մաշկեղ չղջիկը (*Vespertilio murinus*): Այլ կաթնասուններից շինություններում բնակվում են մոխրագույն համստերիկը (*Cricetulus migratorius*), տնային մուկը (*Mus musculus*) և մոխրագույն առնետը (*Rattus norvegicus*):

ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված են 10 տեսակ՝ կովկասյան ընձառյուծը (EN), խայտաքիսը, բեզուարյան այծը, հայկական մուֆլոնը (VU), փոքրասիական համստերը,

հարավային պայտաքիթ չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը, զուլավոր բորենին, ջրասամույրը (NT) և արաքսյան գիշերաչղջիկը (DD): ՀՀ Կարմիր գրքում գրանցված են 17 տեսակ, զուլավոր բորենին (Regionally Extinct RE, տարածաշրջանում անհետացած), կովկասյան ընձառյուծը, ազնվացեղ եղջերուն (CR), լայնականջ ոզնին, Շելկովնիկովի կուտորան, Բլազիոաի պայտաքիթ չղջիկը, արաքսյան գիշերաչղջիկը, ջրասամույրը, հայկական մուֆլոնը (EN), հնդկական մացառախոզ, հարավային պայտաքիթ չղջիկը, ասիական լայնականջ չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը, անտառակատուն, խայտաքիսը, գորշ արջը և բեզոարյան այծը (VU):

«Արևիք» ազգային պարկի տարածքում հանդիպող ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներն են՝ Լայնականջ ոզնի, Նատերերի արաքսյան գիշերային չղջիկ, Ասիական լայնականջ չղջիկ, Սովորական երկարաթև չղջիկ, Հնդկական վայրենակերպ կամ մացառախոզ, Անդրկովկասյան գորշ արջ, Կովկասյան անառակատու, Կովկասյան ջրասամույր, Առաջավոր ասիական ընձառյուծ, Բեզոարյան այծ, Հայկական մուֆլոն, Եվրոպական տյուվիկ, Եվրոպական օձակեր, Հարավեվրոպական բերկուտ, Նախասիական մորուքավոր արծիվ, Սովորական սպիտակագլուխ անգո, Պարսկական կանաչ մեղվակեր, Արևմտյան սև փայտփոր, Արևերան կարմրագլուխ շամփրուկ, Երգող շահրիկ, Ասիական շիկապոչ քարաթռչնիկ, Խայտաբդետ ժայռային կեռնեխ, Եվրոպական կապույտ ժայռային կեռնեխ, Իրանական կապտափող, Սպիտակափող սոխակ, Իրանական սովորական ճոճհավ, Միջերկրածովային երաշտահավ, Կարմրաթև պատասող, ժայռային վարսակուկ, Միջերկրածովային կրիա, Երկարաոտ սցինկ, Առաջավորասիական մաբույա, Կովկասյան կատված, Հայկական իժ, Անդրկովկասյան սահնօձ:

Տարածաշրջանը հարուստ է պատմամշակութային, հնագիտական և բնական հուշարձաններով, որոնք խթան են հանդիսանում զբոսաշրջության կազմակերպման լավագույն բարենպաստ պայմանների ստեղծման համար: Գործունեության ենթակա տարածքը չի առնչվում վերջիններիս հետ և ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ին թիվ N 967-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն, Շվանիձոր համայնքում բնության հուշարձաններ չկան: Շվանիձոր համայնքին մոտ գտնվող բնության հուշարձանները երկուսն են, որոնց անվանումն ու տեղադիրքը բերված են աղյուսակ 1.10-ում:

Աղյուսակ 1.10

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1.	«Աղվան» ջրվեժ, տեսակը՝ ջրագրական	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ձախ վտակ Մալն գետակի, լքված Մալն գյուղից 2.0 կմ հվ-արլ

2.	«Մալնի ինտրուզիա» ներծայթուկ, տեսակը՝ երկրաբանական	Սյունիքի մարզ, Մեղրիի ենթատարածք, Ալվանք գյուղից մոտ 1-1,5 կմ հս, լքված Մալն գյուղի մոտ
----	--	---

1.7. Օդային ավազան

Ընդհանուր տեղեկատվություն

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի («Հայէկոմոնիթորինգ») կողմից:

2019 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան, Ծաղկաձոր քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործել է 16 ստացիոնար դիտակայան, որոնցից 5 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվել են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ:

Շվանիձորի տարածաշրջանում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նուղեցույց¹: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Շվանիձորը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

Աղմուկի մակարդակ

¹ ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

Ներկայացվող տեղանքում աղմուկի ժամանակավոր և կարճատև աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, որի նվազեցման կամ կանխարգելման համար նախատեսվել են միջոցառումներ:

1.8. Ջրային ռեսուրսներ

Ջրագրական ցանց

Տարածաշրջանի հիմնական ջրագրական միավորն է Մեղրի գետը իր բազմաթիվ վտակներով: Դրանք տիպիկ լեռնային գետեր են, բնութագրվում են խառը սնուցումով (ձնաանձրևային և աղբյուրային) և խիստ փոփոխուն դեբիտով: Գետաջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման և էներգետիկ նպատակներով:

Մեղրի գետը սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լեռնաբազուկի 3229 մ բարձրության վրա գտնվող Սև (Գեկ-Գյոլ) լճից: Մեղրի գետի ընդհանուր երկարությունը 36 կմ է, ջրհավաք մակերեսը՝ 274 կմ², տարեկան հոսքը՝ 105 մլն.մ³, միջին տարեկան ծախսը Մեղրի դիտման կայանի տվյալներով՝ 3.23 մ³/վրկ:

Մեղրի գետը թույլ սելավավտանգավոր է:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս):

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների աղտոտվածությունը վերահսկվում է «Հայէկոմոնիթորինգ»-ի կողմից:

Մակերևութային ջրերի որակի դիտարկումներ իրականացվել են հանրապետության 43 գետի, Արփա-Սևան թունելի, Երևանյան լճի, Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Ագատի, Կեչուտի ջրամբարների և Սևանա լճերի 131 դիտակետում, որտեղից վերցվել է 949 փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել է միջին հաշվով 45-ական ֆիզիկաքիմիական ցուցանիշ:

Ըստ «Հայէկոմոնիթորինգ»-ի «Շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիթորինգի արդյունքների մասին» 2017 թ. տեղեկանքի Մեղրիգետի Մեղրիից վերև և գետաբերանի

հատվածում ջրի որակի ցուցանիշը 3-րդ դաս է, իսկ ջրի որակի ընդհանրական դասը 4-րդ որակի:

2. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2.1. Մարզի սոցիալ-տնտեսական ցուցանիշները

ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Ադրբեջանին:

Ստորև բերված են մարզի ընդհանուր ցուցանիշները ըստ ՀՀ Ազգային Վիճակագրական ծառայության տվյալների:

Աղյուսակ 5.1 Մարզի ընդհանուր բնութագրերը²

Տարածքը, կմ ²	Մարզկենտրոնը	Բնակչության խտությունը, մարդ/կմ ²	Մարզկենտրոնի հեռավորությունը Երևանից, կմ
4 506	ք.Կապան	31	301

Աղյուսակ 5.2. Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, 1 000 մարդ

Անվանումը	01.01.2017
Սյունիքի մարզ	138.9
Քաղաքային բնակչություն	93.9
Գյուղական բնակչություն	45.0

² armstat.am

Մյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Անդրկովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ):

Մյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ: Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պերլիտի և դիատոմիտների պաշարներ): Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են: 2015թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 13.3%,
- գյուղատնտեսություն 7.0%,
- շինարարություն՝ 5.1 %,
- մանրածախ առևտուր՝ 1.2 %,
- ծառայություններ՝ 1.7%:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսեր և կարտոֆիլ) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզի տարածքով է անցնում Հայաստանի Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր

ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:

Սյունիքի մարզը հարուստ է պատմության և մշակույթի հուշարձաններով: Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Սյունիքի մարզի ցուցակը ներառում է 2812 հուշարձան՝ 997 պահպանական միավորով: Պատմության և բնության հուշարձանների առատությունը և գեղեցիկ բնությունը ապահովում են Սյունիքի մարզի զբոսաշրջիկային գրավչությունը: Մարզի ամենագրավիչ վայրերից մեկը հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձան Տաթևի վանական համալիրն է (IX դար), որտեղ 1390-1435 թթ. գործել է Տաթևի նշանավոր համալսարանը: 2010թ.-ին շահագործման է հանձնվել 5.7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար “Տաթևեր” ճոպանուղին (առավելագույն բարձրությունը 380 մ), որն անցնում է Որոտան գետի կիրճով, ձգվում սարերի վրայով և Հալիձոր գյուղից հասնում Տաթևի վանական համալիր: Որոտանի կիրճում են գտնվում Տաթևի ՀԷԿ-ը՝ Որոտանի ՀԷԿ-երի կասկադի առաջնեկը և Շամբի ջրամբարը, որտեղից 18 կմ երկարությամբ թունելով ջուրը հասնում է Տաթևի ՀԷԿ-ի տուրբիններին: 2012թ. գործարկվեց Հին Խնձորեսկի երկու ձորափը (Ղանդունց նովն ու Ներքին թաղը) իրար միացնող իր տեսակի ու չափի մեջ եզակի կախովի կամուրջը: Կամուրջը հսկա ձորի մի ափից մյուսը ձգվում է ավելի քան 160 մետր: Բարձրությունն ամենախոր տեղում 63 մ է: Մարզի պատմամշակութային հուշարձանների մեջ հայտնիներից են Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Սիսիանի նեոլիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության Սիսիան քաղաքից 3.2 կմ դեպի հյուսիս գտնվում է “Չորաց քարեր” հուշարձանախումբը, որը հայտնի է նաև Քարահունջ անունով: Այն մեզալիթյան դարաշրջանի (Ք.ա. II հազարամյակ) հուշարձան է:

Սյունիքի մարզը հարուստ է նաև բնության հուշարձաններով: Բնության հուշարձանները բնության բացառիկ կամ տիպիկ, գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտներ են և ունեն բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ: Արգելվում է ցանկացած գործունեություն, որը վնասում է այն կամ վատթարացնում նրա վիճակն ու պահպանությունը: Բնության հուշարձանների (կենդանի կամ անկենդան) պահպանության կարգը սահմանվում է յուրաքանչյուր բնության հուշարձանների համար կազմված անձնագրով, որտեղ նշվում է նրա անվանումը, դասակարգումը, նշանակությունը, նկարագրությունը, չափագրությունը, տեղադիրքը, կոորդինատները, զբաղեցրած տարածքը (պահպան. գոտու հետ միասին), պահպանությունն իրականացնող մարմինը և վերջինիս պարտավորությունները: Սյունիքի մարզի

հանրահայտ բնության կենդանի հուշարձաններից են արևելյան սոսու մնացուկային պուրակը՝ Ներքին Հանդ գյուղի մոտ, Գրիֆիթի հուղայածառը, երկրաբանական հուշարձաններից՝ ռելիեֆի հողմահարման եզակի ձևերը՝ բնական ժայռաբուրգերը Գորիսում և Խնձորեսկում, ինչպես նաև բազմաթիվ բարձրլեռնային լճակներ, հանքային աղբյուրներ, ջրվեժներ:

2.2. Ազդակիր համայնքները, ենթակառուցվածքները /առողջապահություն, տրանսպորտային համակարգ, էներգացանց, կրթություն/, հողերի տնտեսական յուրացման բնութագիրը

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

<<Յուրոմ>> ՄՊ ընկերության կողմից նախատեսվող բջջային կայանի և դրա էլեկտրամատակարարման համակարգը տեղադրվելու է Շվանիձոր բնակավայրի վարչական տարածքում, որը հանդիսանում է Մեղրիի համայնքի մաս:

Մեղրի համայնք

Մեղրի բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է 2016 թվականի սեպտեմբերին՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի բոլոր 13 համայնքների խոշորացման արդյունքում՝ "Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին" 2016 թվականի հունիսի 17-ի ՀՀ ՀՕ-100-Ն օրենքով: Այն ընգրկում է Մեղրի և Ագարակ քաղաքային, ինչպես նաև, Ալվանք, Այգեձոր, Գուղեմնիս, Թխկուտ, Լեհվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր և Տաշտուն գյուղական բնակավայրերը: Հաշվառված բնակչությունը 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ 11657: Որից՝ ըստ բնակավայրերի. Մեղրի՝ 4601, Ագարակ՝ 4729, Կարճևան՝ 270, Շվանիձոր՝ 339, Վահրավար՝ 35, Գուղեմնիս՝ 36, Լիճք՝ 147, Տաշտուն՝ 116, Լեհվազ՝ 627, Ալվանք՝ 289, Վարդանիձոր՝ 152, Նոնաձոր՝ 151, Թխկուտ՝ 67, Կուրիս՝ 53, Այգեձոր՝ 2:

Մեղրի բնակավայր

Հեռավորությունը Երևան քաղաքից՝ 376 կմ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 84 կմ

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 610 մ

Մեղրին գտնվում է Հայաստանի Հանրապետության Հարավ-արևելյան տարածքում: Այն

Մյունիքի մարզի հարավային սահմանապահ քաղաքներից է, որը տարածված է Մեդրի գետի աջ և ձախ ափերին, որոնք կոչվում են Մեծ և Փոքր թաղեր: Քաղաքը պետական սահմանով և մայր Արաքս գետով բաժանվում է Իրանի Իսլամական Հանրապետությունից: Քաղաքի կլիման չոր և մերձարևադարձային է: Այստեղից է սկսվում Հայաստանի գարունը, իսկ աշունը ամենաուշն է հրաժեշտ տալիս: Ամառը այստեղ շոգ է, իսկ ձմեռը՝ ոչ ձյունառատ:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 3201հա, այդ թվում՝

- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1856 հա, որից՝
- վարելահող՝ 77 հա, բազմամյա տնկարկ՝ 78 հա, խոտհարք՝ 2 հա, այլ հողատեսք՝ 1699 հա
- բնակավայրերի հողեր՝ 223 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 105 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 18 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 906 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 76 հա,
- ջրային հողեր՝ 18 հա

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Նախատեսվող աշխատանքների նկարագրությունը

Նախատեսվող գործունեության իրականացման համար <<Յուքոմ>>ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով հատկացվել է 0,04 հա հողատարածք /անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 27102018-09-0023/ կառույցների տեղադրման համար /ԼՏԵ, բջջային կայան/: Հատկացված հողամասի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, իսկ գործառնական նշանակությունը, կամ հողատեսքը՝ կապի: Էլեկտրամատակարարման և օպտիկամանրաթելային օղային գծերի անկացման տարածքները համընկնում է <<Զանգեզուր>> կենսոլորտային համալիրի>> ՊՈԱԿ-ի <<Արևիք>> մասնաճյուղի <<Արևիք>> ազգային պարկ տեղամասի տարածքների հետ, ինչը հավաստում է Շրջակա միջավայրի նախարարությունից 09.07.2019թ ստացված 5/22.3/51715 գրությունը: Նշված տարածքում ընդգրկված հողամասերի օգտագործումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Աշխատանքային նախագծի համար հիմքը է հանդիսանում՝

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն կողմից 25.01.2018թ գրությամբ տրված՝ N° ՏՊ-570-10(6)/0016 Տեխնիկական պայմանները:

2. Ինժեներա-հետախուզական նյութերը և շահագրգիռ կազմակերպությունների հետ համաձայնությունները:

Սույն աշխատանքային նախագծի ծավալների մեջ մտնում են՝ տրանսֆորմատորային ենթակայանը (ԼՏԵ), 10կՎ օդային գիծը (ՕԳ), հողանցման համակարգերը և 0.4 կՎ սնող մալուխը:

Համաձայն վերոհիշյալ տեխնիկական պայմանների բջջային կայանի էլեկտրամատակարարման համար նախատեսվում է 10/0.4 կՎ, 25 կՎԱ հզորության ԼՏԵ-ի տեղակայում՝ առանձին ցանկապատված տարածքում:

ԼՏԵ-ի սնումն իրագործվելու է «Շվանիձոր» 35/10 կՎ ե/կ-ի «Շվանիձոր» 10կՎ օդային գծից սնվել «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ պատկանող 10կՎ օդային գծից՝ ճյուղավորումով:

Գծի ընդհանուր երկարությունը 245մ է, ևս 15 մ վերջին հենասյունից մինչև ենթակայան և ներքին միացում, ընդհանուր 260մ: Այն անցնում է բնակեցված և չբնակեցված տեղանքներով, որտեղ ըստ կլիմայական պայմանների բնութագրի՝ քամու արագությունը 40 մ/վ է, սառցակեղևը՝ 20 մմ: ՕԳ-ի հաղորդալարերի հեռավորությունը հողի մակերևույթից, ՕԳ-ի աշխատանքի բնականոն ռեժիմում պետք է լինի 6մ-ից ոչ պակաս:

10կՎ ՕԳ-ը նախատեսված է փայտյա հենասյուներով, երկաթբետոնե կցորդով ըստ 3.407-85 տիպարային նախագծի՝ AC-35/6.2 մակնիշի հաղորդալարով: ՕԳ-ի թիվ 1 և թիվ 7 հենասյունների վրա տեղադրվում է գատիչ կայան, ըստ Արք. N 9.0240 տիպարային նախագծի:

Պաշտպանությունը գերլարումներից կատարվում է վենտիլային պարպիչներով, որոնք տեղադրվում են ԼՏԵ-ի 10կՎ մուտքի վրա:

Էլեկտրաէներգիայի հաշվարկը նախատեսված է իրականացնել էներգիայի եռաֆազ, էլեկտրոնային, երկտարիֆ հաշվիչով՝ տեղադրված ԼՏԵ-ի 0.4 կՎ մուտքի վրա:

Կայանի սպառիչների սնումն իրականացվում է BBF-1 կՎ մակնիշի, 4×10 մմ² մալուխով, անցկացված ԼՏԵ-ի 0.4 կՎ վահանից մինչև մուտքի արկղ, որն անցնում է մետաղաձուլանով:

Զատիչ կայանով հենասյուները պետք է հողանցվեն: Նշված հենասյունների հողանցումը կատարվում է ցինկապատ անկյունակ պողպատով 50×50×5 մմ L=2.5 մ (թիվ 1 հենասյան համար 4 հատ, իսկ 7-ինը միացնել ԼՏԵ-ի հողանցման սարքին), որոնք խփվում են հողի մեջ իրարից 3 մ հեռավորության վրա և միացվում են 30×3 մմ ցինկապատ շերտապողպատով:

Իջեցումը դեպի հողակցիչ կատարվում է 30×3 մմ ցինկապատ պողպատով:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համաձայն ПУЭ-ի, СНиП 3.05.06-85 պահանջների:

Օպտիկամանրաթելային մալուխի անցկացման համար նախատեսվում է 15 հենասյուներ: Օպտիկամանրաթելային մալուխը հանդիսանում է դիէլեկտրիկ և այն կայուն է էլեկտրամագնիսական ալիքների նկատմամբ:

ADSS տիպի մալուխի մոնտաժման համար օգտագործվող ամրակները ունիվերսալ են, պատրաստված են նիկելապատ մետաղից, որի արդյունքում չեն ենթարկվում կոռոզիայի և հարմար են ամրացման համար ցանկացած պրոֆիլ ունեցող սյան վրա:

Այն բաղկացած է մի քանի դետալներից՝ 1-ին դետալը ամրանում է սյանը, 2-րդ դետալը ամրանում է մալուխին:

Այս ամրակների օգնությամբ առանց հավելյալ կոնստրուկցիաների կարողանում ենք ստանալ մալուխի նախագծով տրված կորացումները:

Օպտիկամանրաթելային մալուխները միմյանց զոդելու համար տեղադրվում է հատուկ բաժանման տուփեր՝ Gji-7005-48 Fo և Gjs-6005-48 Fo:

Աշխատանքները կազմակերպվելու են հետևյալ սխեմայով՝

- կատարել հողային աշխատանքներ՝ փորելով հիմքերը,
- տեղադրել հենարանները,
- տեղակայել ենթակայանը,
- անցկացնել լարերը, կատարել միացում:

Աշխատանքների ընթացքում ծառահատումներ չեն նախատեսվում, քանի որ գործունեության ենթակա տարածքներում բացակայում են:

5. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

5.1 Ջրոյական տարբերակ (նախապեսվող գործունեության չեղարկում)

Ջրոյական տարբերակի դեպքում աշխատանքային նախագծով նախատեսված գործունեությունը չի իրականացվի: Այս տարբերակը ֆինանսատնտեսական և տեխնիկական իրագործելիության, ինչպես նաև բնապահպանական տեսանկյունից ամենացանկալին է, քանի որ չի պահանջում ֆինանսական լրացուցիչ ներդրումներ և չի հանգեցնում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության առաջացմանը: Սակայն նախատեսվող գործունեության իրագործումն ունի իր կարևորությունը և կունանա դրական ազդեցություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար, ապահովելով հասանելի և մատչելի բջջային և ինտերնետային կապ: Հետևաբար, կարելի է փաստել, որ զրոյական տարբերակը անցանկալի է:

5.2 Ստորգետնյա էլեկտրամատակարարման տարբերակ (էլեկտրա-մատակարարման գծի կառուցումը ստորգետնյա մալուխային եղանակով)

Այլընտրանքային տարբերակներից մեկն է՝ 260 մ երկարությամբ էլեկտրամատակարարման գիծն անցկացնել ստորգետնյա մալուխային եղանակով: Այս տարբերակը ենթադրում է մոտ 260 մ երկարությամբ խրամուղու փորում՝ շինարարական տեխնիկայով, հանված հողային զանգվածի տեղափոխում, մեծածավալ մարդկային ռեսուրսների և շին. տեխնիկայի օգտագործում, շրջակա միջավայրի զգալի աղտոտում, ներառյալ փոշու և գազային արտանետումներ, աղմուկ և այլն: Հետևաբար կարելի է փաստել, որ այս տարբերակի իրականացումը՝ թե բնապահպանական և թե ֆինանսատնտեսական տեսանկյունից նպատակահարմար չէ:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ նախատեսվող գործունեության ընտրված տարբերակը, այն է՝ ՀՀ Սյունիքի մարզում Շվանիձոր համայնքում <<Յուքոմ>> ՍՊԸ կողմից նախատեսվող բջջային կապի կայանի էլեկտրասնուցման և օպտիկական մանրաթելի օդային գծերի կառուցման եղանակն ամենանպատակահարմարն է:

4.2. Հողային աշխատանքները

Հողային աշխատանքները պայմանավորվախ են հենարանների, ենթակայանի և հիմքերի կառուցումով:

Հողային զանգվածների ծավալները ներկայացված են՝

Հենասյունների փոստրակների հորատում և հետլիցք՝ 12.341մ³

Խրամուղու փորում և հետլիցք՝ 5.25մ³

Ընդամենը հանվող հողային զանգված և հետլիցք՝ 17,591 մ³:

Ենթակայանի կառուցման աշխատանքների արդյունքում առաջանալու է 10մ³ ծավալով գրունտ, որից 1.5 մ³ ծավալով գրունտը լինելով հողի բերրի շերտ, պահվելու է ջրադիմացկուն ՊՎՔ ծածկով և անմիջապես աշխատանքի ավարտից հետո օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման համար: Մնացած գրունտը օգտագործվելու է որպես լցանյութ:

Օգտագործվող շինարարական և ավտոտրանսպորտային միջոցները ներկայացված են՝

Փոստրակների հորատիչ – 1 հատ

Վերամբարձ տեխնիկա – 1 հատ

Շինարարության տնտեսությունը կկազմի 2 ամիս:

Հողային աշխատանքեր 9 օր:

№	Միջոցառումների անվանումը	Աշխատանքային օրեր								
		1	2	3	4	5	6	7	8	9
I	Հողային աշխատանքներ հենասյուների տեղադրման համար	■	■	■	■					
III	Հենասյուների տեղադրման և ամրացման աշխատանքներ, ենթակայանի կառուցման աշխատանքներ		■	■	■	■				
IV	Գրունտի ետլիցք		■	■	■	■				
V	Այլ նյութերի տեղափոխման աշխատանքներ՝ հաղորդալարեր և այլն						■	■	■	
VI	Հաղորդալարերի մոնտաժում						■	■	■	■

Էլեկտրամատակարարման գծի կառուցման աշխատանքների ժամանակացույցը

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

5.1. Ազդեցության հիմնական տեսակները

Օդային գծերի և ենթակայանի կառուցման համար իրականացվում է շինարարություն, որը ներառում է հողային աշխատանքներ, շինարարական տեխնիկայի շահագործում, նյութերի և բնառեսուրսների օգտագործում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո օդային գծերը գործարկվում են և շահագործման փուլում նույնպես առաջանում է որոշակի ճնշում շրջակա միջավայրի վրա:

5.1.1. Շինարարական աշխատանքներ

Շինարարության հիմնական փուլը իրականացվում է մեխանիզացված համալիրով և ընդգրկում է՝

- գրունտների մշակում,
- գրունտների փխրեցում,
- շինարարական աշխատանքներ,
- մոնտաժային աշխատանքներ :

Բարձրավույտ էլեկտրահաղորդման ՕԳ-ի և ենթակայանի շինարարության ժամանակ նկատվում է հողածածկի խախտում, տեղի է ունենում մթնոլորտային օդի աղտոտում շինարարական մեքենաների և մեխանիզմների աշխատանքից և փոշուց, առաջանում է աղմուկի լրացուցիչ ազդեցություն:

Բարձրավույտ էլեկտրահաղորդման ՕԳ-ի շինարարությունը բացասական ազդեցություն է գործում շրջակա միջավայրի վրա: Աշխատանքային նախագծի համաձայն աշխատանքների իրականացման ընթացքում օդային գծի ուրվագծով ծառահատումներ իրականացնելու անհրաժեշտություն չի առաջանա, քանի որ դրանք բացակայում են:

Շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն բացասական ազդեցության մեղմման և վերացման համար շինարարության ընթացքում նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ:

Սակայն հարկ է նշել, որ շինարարության բոլոր փուլերում շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա ազդեցությունը կրում է ժամանակավոր բնույթ և աշխատանքային հրահանգների ճիշտ պահպանման դեպքում հնարավոր է ազդեցությունը հասցնել նվազագույնի:

5.1.2. Մթնոլորտային օդի պահպանություն

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է նույնականացնել բոլոր այն գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնք յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի զուգակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ վնասակար նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ինչպես նաև ազդել տարածաշրջանի կենսաբազմազանության վրա:

1.1 Մթնոլորտային արտանետումներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են.

- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների աշխատանքից առաջացող գազանման արտանետումները,
- հողային/փորման և ճանապարհների հարթեցման աշխատանքներից և շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին:

Շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները, որոնք պլանավորվում է օգտագործել գործունեության իրականացման ժամանակ, հանդիսանում են չկազմակերպված արտանետումների հիմնական աղբյուրները:

1.2 Մթնոլորտային արտանետումներ

ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը

Հաշվարկները կատարված են գործող մեթոդակարգի համաձայն :

$$Q = (P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times G \times 10^6 \times B \times P6) / 3600 \text{ տ/ժամ, որտեղ (1)}$$

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0.05

P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0

P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.2

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.6

G վերամշակվող գրունտի քանակը, 17.591 մ³: Հողային աշխատանքների տևողությունը ըստ աշխատանքային նախագծի ժամանակացույցի կազմում է 15 օր

$$15 \text{ օր} \times 8 \text{ ժամ/օր} = 120 \text{ ժամ/շին}$$

$$G - 17.591 \text{ մ}^3 : 120 \text{ ժամ} = 0.146 \text{ մ}^3 / \text{ժամ կամ հաշվի առնելով տեսակարար կշիռը՝} \\ 0.146 \text{ մ}^3 / \text{ժամ} \times 2.7 \text{ տ/մ}^3 = 0.395 \text{ տ/ժամ}$$

$$Q = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.2 \times 0.5 \times 0.395 \times 10^6 \times 0.6 \times 1.0) / 3600 = 0.0065 \text{ գ/վրկ}$$

$$0.0065 \text{ գ/վրկ} \times 120 \text{ ժամ} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 1000000 = 0.0028 \text{ տ/շին. ժամանակահատված}$$

բ) Փոշու արտանետումների հաշվարկը շինարարական տեխնիկայի աշխատանքի դեպքում

Շինարարական տեխնիկայի աշխատանքների ընթացքում իրականացվում է տեղանքի հարթեցում, հանվող հողային զանգվածի և առաջացած թափոնների տեղափոխում ավտոինքնաթափ մեքենաներով: Հաշվի են առնվում շինարարական հարթակում անընդհատ աշխատող տեխնիկայից առաջացած արտանետումները:

Տրանսպորտի շարժման ժամանակ մթնոլորտ է արտանետվում փոշի: Տրանսպորտի շարժը տեղի է ունենում ամբողջ շինարարության ընթացքում՝ 2 ամիս կամ 416 ժամ:

Մթնոլորտ արտանետվող փոշու քանակը որոշվում է նշված մեթոդակարգի համաձայն /3/:

$$Q_{\text{տր.}} = (C_1 \times C_2 \times C_3 \times N \times L \times q_1 \times C_6 \times C_7) / 3600 + C_4 \times C_5 \times C_6 \times q_2 \times F_0 \times n$$

բանաձևով, որտեղ՝

C_1 – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռունանկությունը, $C_1 = 1.0$

C_2 – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը, $C_2 = 1.0$

C_3 – գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը, $C_3 = 0.1$

N – ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում, $N = 1$

L – մի վազքի միջին երկարությունն է, կմ $L = 0.05$ կմ

C_4 – գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմայի վրա նյութի մակերևույթի պրոֆիլը, C_4 – ը տատանվում է 1.3 – 1.6-ի սահմաններում $C_4 = 1.3$

F_0 – պլատֆորմայի միջին մակերեսն է, $F_0 = 12$

C_5 – գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը, $C_5 = 1.0$

C_6 – գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը $C_6 = 0.2$

C_7 – գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը, ընդունում ենք՝ $C_7 = 0.01$

q_1 – 1 կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ $q_1 = 1450$ գ

q_2 – նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները, գ/մ² վրկ $q_2 = 0.002$

n – ավտոմեքենաների թիվն է $n = 2$

$$Q_{\text{տր.}} = (1 \times 1 \times 0.1 \times 1 \times 0.05 \times 1450 \times 0.2 \times 0.01) / 3600 + 1.3 \times 1.0 \times 0.2 \times 0.002 \times 12 \times 2 = 0.012 \text{ գ/վրկ}$$

$$Q_{\text{տր.}} = (0.012 \times 2400 \times 3600) / 10^6 = 0.018 \text{ տ/շին. Ժամանակահատված}$$

գ) Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները

Մթնոլորտային օդը աղտոտվում է ժանր տեխնիկայի աշխատանքի ընթացքում՝ դիզելային վառելիքի այրման հետևանքով առաջացած արտանետումներով, որոնք հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված <<Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման>> մեթոդական հրահանգի հիման վրա: Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները (բացառությամբ ծծմբային անհիդրիդի) բերված են ստորև:

Աղյուսակ 5. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՑOU	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները, կախված ավտոմոբիլային պարկի միջին տարիքից և տեխնիկական վիճակից, բերված են ստորև աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները

Ավտոմեքենաների կատեգորիան	Վնասակար նյութը	Ազդեցության գործակիցը	
		պարկի միջին տարիքը	տեխնիկական վիճակը
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	1.33	1.8
	CH	1.2	2.0
	NO _x	1.0	1.0
	CO ₂	1.0	1.0
	N ₂ O	1.0	1.0

Ածխածնի օքսիդի (CO), ածխաջրածինների (CH), ազոտի օքսիդների (NO_x) գործակիցները վերցված են <<Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներից>> (Մոսկվա, Հիդրոմետհրատ - 1983), իսկ ածխածնի երկօքսիդի (CO₂) և ազոտի երկօքսիդի (N₂O) գործակիցները ընդունվել են 1, քանի որ որևէ այլ մեծություններ դրանց համար չեն առաջարկվում:

Ընդամենը շինարարության ընթացքում անընդհատ շահագործվելու են 2 հատ տեխնիկական միջոց, որոնք օգտագործում են դիզելային վառելիք: Դիզվառելիքի միջին օրական ծախսը կկազմի՝ 60 լ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ 60 x 0.835 = 50.1 կգ/օր: Ծանր տեխնիկայի և բեռնատար մեքենաների աշխատանքը կիրականացվի ամբողջ շինարարության ընթացքում:

Աղյուսակ 7. Վնասակար նյութերի արտանետումները

Ավտոմեքենաների կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումներ, գ/կգ	Արտանետումներ,	
			տ/շին. ժամ.	գ/վրկ
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	87.14	0.227	0.152
	CH	0.58	0.002	0.001
	NO _x	42.3	0.110	0.074
	N ₂ O	0.122	0.00032	0.00021
	ՑՕՄ	8.16	0.021	0.014
	ՊՄ	4.3	0.011	0.007

Ծծմբային անհիդրիդ

(SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի:

Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ESO_2 = 2\Sigma ksb, \text{ որտեղ }`$$

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.003 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 50.1 տ/շին. ժամ

$$SO_2 = 2 \times 50.1 \times 0.003 = 0.3 \text{ տ/տարի կամ } 0,2 \text{ գ/վրկ:}$$

Շինարարական աշխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ (տ/շին. ժամանակահատված)					
	Փոշի	CO	NO _x + N ₂ O (այսուհետ NO _x)	CH+ՑՕՄ (այսուհետ CH)	ՊՄ	SO ₂
1	2	5	6	8	9	10
1. Փորման-բեռնման աշխատանքներ	0.0065 (0.0028)	-	-	-	-	-
2. Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	0.012 (0.018)	-	-	-	-	-
3. Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումներ	-	0.152 (0.227)	0.074 (0.11)	0.015 (0.023)	0.007 (0.011)	0.2 (0.3)
ԸՆԴԱՄԵՆԸ	0.0185 (0.02)	0.152 (0.227)	0.074 (0.11)	0.015 (0.023)	0.007 (0.011)	0.2 (0.3)

1.3 *Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների վերլուծությունը և գնահատումը*

Հաշվարկների արդյունքները, ամփոփված ըստ յուրաքանչյուր վնասակար նյութի արտանետման, բերված են Աղյուսակ 8-ում: Աղյուսակ 8-ում միավորված են ազոտի երկօքսիդը և ազոտի օքսիդները, ցնդող օրգանական միացությունները ու ածխաջրածինները:

Աղյուսակ 8. Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը գործունեության ժամանակահատվածում

1.4 *Տնտեսական վնասի հաշվարկ*

Շինարարության ընթացքում հիմնական ազդեցությունը պայմանավորված է վնասակար նյութերի արտանետումներով: Կատարված է մթնոլորտային արտանետումների հետևանքով տնտեսությանը հասցված վնասի հաշվարկ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտված դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասի հաշվարկը կատարված է համաձայն գործող /4/ մեթոդակարգի:

Սույն մեթոդակարգը մշակված է այն նյութերի ազդեցության գնահատման համար, որոնց սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նորմատիվները գերազանցել են, սակայն հաշվի առնելով, որ նախկին բոլոր մեթոդակարգերը ՀՀ կողմից ներկայացված չեն և չեն գործում, վնասի հաշվարկը կատարված է վերը նշված մեթոդակարգով:

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով:՝

$$U = \sum_{q} \Phi_{q} \sum_{i} \Psi_{i} P_{i} \quad (1),$$

որտեղ՝

U –ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով, \sum_{q} –ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9 աղյուսակի Կուրորտային և առողջարանական գոտիներ, արգելոցներ, արգելավայրեր տարածքների համար, որին դասվում է նշված տարածքը սահմանված է 10 գործակից:

Վ_i -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, ածխածնի օքսիդի համար ընդունվում է 1, ազոտի երկօքսիդի համար՝ 12.5, անօրգանական փոշուձ, եռակցման աերոզոլի համար՝ 25, ծծմբի անհիդրիդի համար՝ 16.5, ածխաջրածինների համար՝ 3, պինդ մասնիկների համար՝ 25, մանգանի օքսիդների համար՝ 705:

Ք_i -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, Փ_g-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից:

Մույն կարգի համաձայն

$$\Phi_g = 1000 \text{ դրամ:}$$

Ք_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\text{Ք}_i = q (3 S_{U_i} - 2 U_{\theta} U_i), S_{U_i} > U_{\theta} U_i \quad (2)$$

որտեղ՝

$U_{\theta} U_i$ -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով: հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկները ցույց տվեցին, որ սպասվելիք մերձգետնայ կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում, փաստացի արտանետումները ընդունվում են որպես $U_{\theta} U_i$:

S_{U_i} -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային ծավալային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Անշարժ աղբյուրների համար

Անօրգանական փոշի՝ 0.02 տ/շին. ժամ

$$U_1 = 10 \times 1000 \times 25 \times (3 \times 0.02 - 2 \times 0.02) = 5000 \text{ դրամ}$$

Շարժական աղբյուրների համար

Ազոտի օքսիդներ՝ 0.11 տ/շին. ժամ

$$U_7 = 3 \times 10 \times 1000 \times 12.5 \times (3 \times 0.11 - 2 \times 0.11) = 41250 \text{ դրամ}$$

Ածխածնի օքսիդ՝ 0.227 տ/շին. ժամ

$$U_8 = 3 \times 10 \times 1000 \times 1 \times (3 \times 0.227 - 2 \times 0.227) = 6810 \text{ դրամ}$$

Ածխաջրածիններ՝ 0.023 տ/շին. ժամ

$$U_9 = 3 \times 10 \times 1000 \times 3 \times (3 \times 0.023 - 2 \times 0.023) = 2070 \text{ դրամ}$$

Պինդ մասնիկներ՝ 0.011տ/շին. ժամ

$$U_{10} = 3 \times 10 \times 1000 \times 25 \times (3 \times 0.011 - 2 \times 0.011) = 8250 \text{ դրամ}$$

Ծծմբային անհիդրիդ՝ 0.3 տ/շին. ժամ

$$U_{11} = 3 \times 10 \times 1000 \times 16.5 \times (3 \times 0.3 - 2 \times 0.3) = 148,480 \text{ դրամ}$$

$$U = 5000 + 41250 + 6810 + 2070 + 8250 + 148480 = 211860 \text{ դրամ/շին. ժամ:}$$

Ներկայացված գումարը արտահայտում է վնասակար նյութերի հետևանքով տնտեսությանը հասցված հարաբերական (բերված) վնասի դրամային արտահայտությունը:

5.1.3. Ջրային ռեսուրսներ

Ջրամատակարարում և ջրահեռացում

ՕԳ և ենթակայանի շինարարության ընթացքում ջրամատակարարումը կատարվում է աշխատողներին խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, հողային զանգվածը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Խմելու ջուրը գործող արտադրական հրապարակ նախատեսվում է բերել Շվանիձոր գյուղի համայնքային ջրացանցից՝ ավտոջրատար մեքենաներով կամ թերմոսներով, իսկ տեխնիկական ջուրը ջրցան ավտոմեքենայով:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է - 2

N - ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

n_1 - բանվորների թիվն է - 8,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025մ³/մարդ օր,

T - աշխատանքային օրերի առավելագույն թիվն է - 60 օր:

Այսպիսով՝ $W = (2 \times 0.016 + 8 \times 0.025) \times 60 = 13.92$ մ³/շին ժամանալախատված, միջին օրեկան 0.232 մ³:

Կենցաղային կեղտաջրերը՝ $13,92 \times 0.95 = 13,324$ մ³, միջին օրեկան՝ 0.22 մ³:

Հաշվի առնելով, որ մոտակայքում կա բնակավայր, աշխատողների կենցաղային կարիքների համար օգտագործվելու է գյուղի տներից մեկը:

ա. Աշխատանքային հարթակ և ճանապարհներ

Այդ ծախսը հաշվվում է $V_1 = S \times K \times T \times K_1$,

որտեղ՝ S - թրջվող մակերեսն է, աշխատանքային հարթակ՝ 10մ²,

K - ջրցանման նորման - 0.0015մ³/1մ²

Հաշվի առնելով հողային աշխատանքների օրերի թիվը, ջրցանի օրերը կկազմեն՝

15 օր:

Այսպիսով՝ $V_1 = 10 \times 0.0015 \times 15 = 0,225$ մ³,

Միջին օրեկանը կազմում է 0,015 մ³:

Ընդամենը տեխնիկական ջրապահանջը կկազմի՝ $13,92 + 0,225 = 14,145$ մ³/շինժամ:
Տեխնիկական ջուրը նախատեսվում է բերել Շվանիձոր գյուղից :

Հարթակների և ճանապարհների ջրցանի և հողային զանգվածների խոնավացման արդյունքում կեղտաջրեր չեն առաջանում:

5.1.4. Թափոնների կառավարում

Շինարարական աշխատանքների ընթացքում փորվում հանվում են գրունտեր: Ընդամենը հանված գրունտերի ծավալը կկազմի 13,6 խ.մ., որից 12 խ.մ. օգտագործվում է որպես ետլիցք, 1,6 խ.մ. տարածքի համահարթեցման համար:

Շինարարությունն իրականացնող անձնակազմի կենսագործունեության արդյունքում առաջանում են կենցաղային թափոններ, որոնք հեռացվում են համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Ընդամենը կենցաղային թափոնների ծավալը կկազմի՝ 480 կգ:

Շինարարական և կենցաղային աղբը հավաքվելու են իրարից առանձին՝ աղբամանների մեջ: Մեղրի համայնքի աղբահանող կազմակերպության հետ կնքվելու է պայմանագիր՝ կենցաղային և շինարարական աղբի հավաքման և քաղաքային աղբավայրում տեղադրման համար:

Տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման և սպասարկման ընթացքում կարող են առաջանալ հատկությունները կորցրած բանեցված տրասնֆորմատորային յուղեր, որոնք պատկանում են վտանգավորության III-րդ դասի: Այդ յուղերը հավաքվելու են մետաղական տարողությունների մեջ և հանձնվում վերամշակող կազմակերպությունների:

5.1.5. Կենսաբազմազանություն

5.1.6. Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր վնասակար ազդեցության բնութագրիչը

Տնտեսվարողները, որոնց գործողությունների ընթացքում հնարավոր է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներին կամ բուսատեսակներին, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար: Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը (ՀՀ Կենդանական աշխարհի մասին օրենք, 03.04.2000թ հոդված 18, ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենք 23.11.1999 թ հոդված 17):

Օպտիկամանրաթելային մալուխի անցկացման համար կտեղադրվի 15 հենասյուն, գծի ընդհանուր երկարությունը 500մ, ինչը նշանակում է, որ նախատեսվող գործունեության տարածքը շատ մոտ է Շվանիձոր համայնքին: Չնայած, որ «Արևիք»

ազգային պարկը ունի հարուստ կենսաբազմազանություն, Շվանիձոր համայնքի շրջակայքի կենսաբազմազանությունն աչքի չի ընկնում հարուստ բուսական և կենդանական աշխարհով, ինչը հավանաբար պայմանավորված է անտրոպոգեն ազդեցություններով՝ բնակավայրին մոտիկ գտնվելու հանգամանով և մոտակա բնակչության կողմից նշված տարածքներն օգտագործելու պատճառով: Նախատեսվող գործունեության տարածք այցելության և դաշտային ուսումնասիրության ընթացքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանատեսակներ չեն հանդիպել: Հենասյունների տեղադրման հարթակների տարածքներում ծառեր չեն հատվելու, քանի որ ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Նախատեսվող աշխատանքների բնույթով և ծավալով պայմանավորված կարելի է նշել, որ օդային գծի և ենթակայանի կառուցման ազդեցությունը չի լինի զգալի: Դրանք պայմանավորված կլինեն՝ հողային աշխատանքների ընթացքում արտանետումների քիչ քանակներով, աղմուկի առաջացմամբ, հողային ռեսուրսների և կենսաբազմազանության վրա առաջացող ազդեցություններով:

Չնայած հողային աշխատանքների փոքր ծավալին, բուսական աշխարհի վրա ազդեցությունը անխուսափելի է: Բուսական աշխարհին հնարավոր վնաս կարող է հասցնել տեխնիկական միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս՝ հատկապես երբ հողային ծածկույթը խոնավ է: Բուսական աշխարհին մեծապես կարող է վնասել նաև տեխնիկական միջոցների աշխատանքը գործունեության ենթակա տարածքում /տվյալ դեպքում հատուկ պահպանվող տարածքում/ վառելիքաքսուրային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները լինելով շարժուն, համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն: Բացառություն են կազմում անթև անողնաշարավորները և նրանք, որոնց ապրելավայրը, բույնը կամ որջը կհայտնվի հողային աշխատանքների տեղամասում:

Տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում աղմուկի մակարդակի ավելացման պատճառով որոշ կենդանիներ հնարավոր է հեռանան այդ տարածքներից, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ և հետագայում իրավիճակը կարող է վերականգնվել:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունների բացառման, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունների համար առաջարկվող մեղմացնող միջոցառումները ներառում են.

- "Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջների համապատասխան՝ բացառել բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը,

ինչպես նաև անտառհատումները:

- Հենասյան տեղադրման վայրերում թփերի առկայության դեպքում հենասյան դիրքի տեղաշարժում (թույլատրելի սահմաններում), հակառակ դեպքում դրանց վերատնկում համապատասխան մարմնի հետ համաձայնեցված:
- ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում:
- բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը.
- Աշխատանքների ընթացքում բացառել՝ տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս, ինչպես նաև թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում: Նշված տարածքում նմանատիպ ենթակառուցվածք ունի ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը, որի սպասարկման համար կա գրունտային ճանապարհ: Նախատեսվող գործունեության իրականացման շինարարության փուլում Յուքում ընկերությունը ևս կօգտվի նշված ճանապարհից:
- Տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:
- Հնարավորինս արագ վերակազմել խախտված հողաբուսաշերտը:
- Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ շրջայց կատարել կառուցվող օդային գծի ուրվագծով, հենասյուների տեղադրման վայրերում առկա բուսատեսակների բացահայտման համար
- Հենասյան տեղադրման վայրերում թփերի առկայության դեպքում դրանց վերատնկում համապատասխան մասնագետի հետ համաձայնեցված՝ տարածքի այլ վայրում
- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:
- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում դադարեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:
- Ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:
- Հենասյունների բետոնյա հիմքերը ծածկել բնական լանդշաֆտը չխաթարող տեղանքին բնորոշ քարացրոններով, որոնք կմեղմացնեն տարածքի լանդշաֆտի

բուսական և կենդանական աշխարհի ու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը:

- Բջջային կայանի ԼՏԵ-ն տեղակայել առանձին ցանկապատված տարածքում, ապահովելով **անվտանգության գոտին /չափը ճշտել և նշել/**
- Անհարժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որաշման դրույթների վրա:

5.1.6 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ
- Շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ մակերեսի վրա,
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Յուղի արտահոսքի արդյունքում հողի աղտոտումից խուսափելու համար շինարարական մեքենաների տեխ. սպասարկումը իրականացնել մասնագիտացված սպասարկման կետերում
- Բանեցված և ավելցուկային տրանսֆորմատորային յուղերը օգտագործել և/կամ հեռացնել սահմանված կարգով:
- Տրանսֆորմատորների տակ նախատեսվում է խճով լցված բետոնյա հոր, որտեղ լցվում է արտահոսած յուղը:

- Բուսահողի հանումը, պահումը և հետագա օգտագործումը իրականացվելու է ապահովելով ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի թիվ 1404-Ն, ինչպես նաև ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշումների համաձայն: Հողի բերի շերտը օգտահանումը և պահպանումը կիրականացվի տարածքում հատուկ նախատեսված վայրում՝ հողի բերրի շերտի օգտագործման կարգի պահանջներով. /հողի ծածկում, պահեստավորված հողի մեկուսացում՝ եզերված պատնեշներով (բորոյուրներ)/, բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո հողի բերի շերտը, որի ծավալը կկազմի 8մ³ կօգտագործվի հենասյուների կից տարածքների բարեկարգման և վերականգնման նպատակով: Վերականգնվող մակերեսը կկազմի մոտավորապես 40մ², իսկ բուսահողով տարածքների վերականգնան/ռեկուլտիվացիայի ծախսը նշված տարածքի համար կկազմի՝ 12000 Հհ դրամ:

5.1.7 Աղմուկի ազդեցությունը

Էլեկտրամատակարարման Օգ-ի և ենթակայանի կառուցման աշխատանքների ընթացքում օգտագործվող տեխնիկայի շահագործման արդյունքում որոշակի չափով կբարձրանա աղմուկի ֆոնային մակարդակը: Շինարարական տեխնիկայի ընտրությունը իրականացվում է այն պայմանով, որ աղմուկի մակարդակը մոտակա բնակելի և հանգստյան գոտիներում չգերազանցի ՀՀ գործող նորմերը:

Բացի այդ, հաշվի առնելով շինարարական աշխատանքների ոչ ծավալուն լինելը, կարճ ժամանակահատվածը, ինչպես նաև շին. տեխնիկայի քիչ քանակությունը՝ կարելի է փաստել, որ Էլեկտրամատակարարման օդային գծի կառուցման ընթացքում առհասարակ աղմուկի ազդեցություն չի սպասվում:

Աշխատանքների իրականացման ընթացքում շին. տեխնիկայի շահագործումից արձակվող աղմուկի մակարդակը դժվար թե գերազանցի 80 դԲԱ թույլատրելի մակարդակը:

5.1. 8 Սոցիալական ազդեցությունները

Սոցիալական ազդեցության տեսանկյունից նախատեսվող գործունեությունը միանշանակ դրական է, քանի որ հետագայում հնարավորություն է ստեղծելու ապահովել բջջային և ինտերնետ կապի հասանելիություն: Սակայն, աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր են ենթակառուցվածքների, այդ թվում

գործունեության տարածք մուտքի ճանապարհով երթևեկության որոշակի սահմանափակման, ինչպես նաև հանրության վրա այլ կարճաժամկետ ազդեցություններ, որոնց վերլուծությունը և մեղմացմանը միտված միջոցառումները ամփոփված են ստորև:

«Արևիք» ազգային պարկի տարածքում նախատեսվող գործունեության իրականացումն ունի իր կարևորությունը, քանի որ բջջային և ինտերնետ կապի հասանելիության ապահովումը կարող է նպաստել ազգային պարկում պահպանության և այլ աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

5.2. Շահագործման փուլ

Էլեկտրահաղորդման ՕԳ-ի շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցության նշանակալից գործոնը համարվում է էլեկտրամագնիսական ազդեցությունը:

Ներկայումս համաշխարհային հասարակության կողմից ընդունված է, որ արհեստական ծագամբ էլեկտրամագնիսական դաշտը (ԷՄԴ) հանդիսանում է էկոլոգիական գործոն:

Տարբեր երկրների գիտնականների բազմաթիվ հետազոտությունները վկայում են լայն ընդգրկույթի և տարբեր ինտենսիվության ԷՄԴ-երի ազդեցությունը էկոհամակարգերի բաղադրամասերի գործառնման և իրավիճակի վրա:

Բնական ֆոնի պարամետրերից տարբերվող ԷՄԴ ազդեցությունը հարուցում է բույսերի և կենդանիների մոտ ֆիզիոլոգիական պրոցեսների կարգավորման շրջելի (հակադարձելի) փոփոխություններ: Կենդանիների մոտ նկատվում է փոխանակային գործընթացների, շարժային և իմունային ակտիվության ինտենսիվության փոփոխություններ և այլն:

Միջատների մոտ ԷՄԴ -ի վրա տարածված ռեակցիաներն են՝ տարածության մեջ կողմնորոշման և կոորդինացիայի կորուստը, ընդհուպ մինչև ընկնելը, հաղորդագծերին մոտ տարածության վրա թռչելուց խուսափումը:

Բույսերի մոտ նկատվում են աճի պրոցեսների, գազափոխանակության, հանքային նյութերի կլանման փոփոխություններ:

Բացի դրանից կան կենդանի օրգանիզմների տեսակներ և խմբեր, որոնք առանձնանում են ԷՄԴ-ի ազդեցության նկատմամբ բարձր ակտիվությամբ, և մոնիտորինգի անցկացման դեպքում ծառայում են միջավայրի էլեկտրամագնիսական աղտոտվածության կենսաինդիկատորներ:

Մինչև այժմ շրջակա միջավայրի վրա ԷՄԴ -ի ազդեցության գնահատման համար սահմանային թույլատրելի մակարդակները (ՍԹՄ) մշակված չեն աշխարհի և ոչ մի երկրում: Բացի այդ շատ երկրներում, մասնավորապես ՌԴ մասնագետները չեն հաստատում ԷԴՄ ուղղակի կապը բացասական երևույթների հետ, քանի որ ըստ իրենց կարծիքի, հետազոտությունները կրում են սահմանափակ բնույթ և ունեցել են կարճաժամկետ ընթացք, որում պատահականության և համընկնումների գործոնը չի բացառվում:

6. ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1. Բնապահպանական միջոցառումներ

Նախատեսվող գործունեության շինարարության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցման միջոցառումներ:

Աղյուսակ 8.1.

Խնդիր/ Պոտենցիալ ազդեցություն	Գործողություն	Իրականացման ժամկետը
Հող/երոզիա	<p>1. Տեղանքի շուրջը կազմակերպել շրջանցող առվակներ: Հենասյուների հիմքերի համար կտրել ուղղանկյուն հողային կտորներ և դարսել ընտրված տարածքում: Կտրման աշխատանքների ավարտից հետո, որի տևողությունը կարող է լինել 1-3 օր, հողային զանգվածը ծածկել անթափանց թաղանթով: Հողային և բետոնային աշխատանքներից հետո՝ որոնց տևողությունը կկազմի 2 շաբաթ, բերրի հողի կտորները տեղադրել հիմքի մոտակա ազատ վայրերում և մերձակա բուսազուրկ տարածքներում:</p> <p>2. Խոտի վերականգնում մեծ թեքությունների</p>	Շինարարության ընթացքում

Խնդիր/ Պոտենցիալ ազդեցություն	Գործողություն	Իրականացման ժամկետը
	վրա հենասյուների տեղակայման վայրերում 3.Օգտագործել միայն գոյություն ունեցող ճանապարհները	
Աշխատողների և տեղական բնակչության ենթարկում ձայների ազդեցության շինարարական աշխատանքների ընթացքում	<p>1.Տրանսպորտի կառավարման օպտիմիլացում բեռնատարների ոչ անհրաժեշտ երթերից խուսափելու նպատակով, առնվազն գիշերվա ժամերին բնակելի վայրերով բեռնատարների շարժումից խուսափում</p> <p>2.Բնակավայրերը հատող բեռնատարների արագության կրճատում</p> <p>3.Հնարավորության դեպքում ցածր ձայնային ու ժային մեխանիկական սարքերի օգտագործում, ինչպես օրինակ բուլդոզերներ, օդային կոմպրեսորներ, բետոնի պոմպեր, էքսկավատորներ և այլն</p> <p>4.Շինարարական և այլ մեքենաների կանոնավոր ստուգում և սպասարկում շինարարական աշխատանքների ընթացքում</p> <p>5.Բարձր ձայների ենթարկվելիս աշխատողների կողմից ականջները պաշտպանող հարմարանքների օգտագործում</p>	Մինչև շինարարության սկիզբը և շինարարության ընթացքում
Օդի աղտոտում (փոշի, արտանետումներ և այլն) շինարարության ընթացքում	<p>1.Առանձնահատուկ դժվար ճանապարհներով ընթացող մեքենաների չափի, քաշի կամ բեռի սահմանափակում</p> <p>2.Մեքենաների արագության նվազեցում և շարժումների սահմանափակում</p> <p>3.Բեռնատարների չպահանջված երթերից խուսափելու նպատակով փոխադրումների կառավարման օպտիմալացում</p> <p>4.Շարժիչների արտանետումները նվազեցնելու նպատակով մեքենաների շարժիչների ստուգում և կարգաբերում</p> <p>5.Շինարարության վայրերում աղբի այրումը խստիվ արգելվում է</p>	Շինարարության ընթացքում
Շինարարության ընթացքում	1.Շինարարական սարքավորումների լվացումը ու վառելիքով վերալիցքավորումը	Շինարարության

Խնդիր/ Պոտենցիալ ազդեցություն	Գործողություն	Իրականացման ժամկետը
ստորգետնյա ջրերի աղտոտում	պետք է իրականացվի մոտակա բնակավայրի հատուկ վայրերում 3.Անձնակազմի նախապատրաստում թափոնների պատշաճ հեռացման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով	ընթացքում
Մակերեսային ջրերի աղտոտում անձրևային սեզոնների ընթացքում	1.Շինարարական նյութերը, ինչպիսիք են ցեմենտի պարկերը, պետք է պահվեն կոնտեյներներում դրանց թափվելուց խուսափելու նպատակով:	Շինարարության ընթացքում
Կենդանական և բուսական աշխարհ	<p>- "Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջների համապատասխան բացառել բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը, ինչպես նաև անտառհատումները:</p> <p>- Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ շրջայց կատարել կառուցվող օդային գծի ուրվագծով, հենասյուների տեղադրման վայրերում առկա բուսատեսակների բացահայտման համար</p> <p>- Հենասյան տեղադրման վայրերում թփերի առկայության դեպքում հենասյան դիրքի տեղաշարժում (թույլատրելի սահմաններում), հակառակ դեպքում դրանց վերատնկում համապատասխան մարմնի հետ համաձայնեցված:</p> <p>- Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս: Նշված տարածքում նմանատիպ ենթակառուցվածք ունի ՎիվաՄել-ՄՏՍ ընկերությունը, որի սպասարկման համար կա գրունտային ճանապարհ: Նախատեսվող գործունեության իրականացման շինարարության փուլում Յուքում ընկերությունը ևս կօգտվի նշված ճանապարհից:</p>	

Խնդիր/ Պոտենցիալ ազդեցություն	Գործողություն	Իրականացման ժամկետը
	<p>- Հենասյունների բետոնյա հիմքերը ծածկել բնական լանդշաֆտը չխաթարող տեղանքին բնորոշ քարացրոններով, որոնք կմեղմացնեն տարածքի լանդշաֆտի բուսական և կենդանական աշխարհի ու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը:</p> <p>- Տեխնիկական միջոցների վառելիքաքսուրային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկատրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:</p> <p>- Հնարավորինս արագ վերակազմել խախտված հողաբուսաշերտը:</p> <p>- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:</p> <p>- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում դադարեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:</p> <p>- Ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:</p> <p>- Հենասյունների բետոնյա հիմքերը ծածկել տեղանքին բնորոշ քարացրոններով:</p> <p>- Բջջային կայանի ԼՏԵ-ն տեղակայել առանձին ցանկապատված տարածքում:</p> <p>- Անհարժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որաշման դրույթների վրա:</p>	
Կոշտ թափոններ	1.Շինարարական տեղամասում տեղադրել աղբամաններ	Մինչև շինարարության սկիզբը և շինարարու-

Խնդիր/ Պոտենցիալ ազդեցություն	Գործողություն	Իրականացման ժամկետը
		թյան փուլի ընթացքում
Աշխատողների առողջությունը և աշխատողների ազդեցությունը տեղական համայնքների վրա	<p>1.Տեղադրել բավարար սանիտարական հարմարություններ աշխատողների համար</p> <p>2.«Էլեկտրահարման վտանգի նախագուշակական նշանների տեղադրում հենասյուների մոտ</p> <p>3.Հարակից ավաններում աշխատողների տեղավորումն առաջնային է:</p>	Մինչև շինարարության սկիզբը: Շինարարության ընթացքում
Ազդեցություն պատմական և մշակութային վայրերի վրա	<p>1.Շինարարության աշխատողների հրահանգավորում անմիջապես դադարեցնելու հողային կամ հիմքի հետ կապված աշխատանքները պատմական կամ մշակութային վայրեր լինելու ցանկացած նշան հայտնաբերելու դեպքում</p> <p>2.Հնարավոր հայտնաբերումների մասին անմիջապես տեղեկացնել ՀՀ Մշակույթի նախարարությանը՝ Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության վարչությանը</p> <p>3.ՀՀ Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության վարչության ներկայացուցիչների հետ համաձայնեցնել, թե կարող են հենասյուները տեղափոխվել մի քանի մետր առաջ կամ հետ պատմական և պեղումների վայրերին դիպչելու դեպքում</p>	Շինարարության ընթացքում
Ենթակառուցվածքներ	Ապահովել անխափան երթևեկությունը երթևեկության պատշաճ կառավարման միջոցով	Շինարարության ընթացքում
Էներգամատակարարման ընդհատում շինարարության ընթացքում	<p>1.Շինարարության ընթացքում էներգամատակարարման ընդհատումների տևողության հնարավորինս չափով կրճատում</p> <p>2.Մի քանի շինարարական խմբերի օգտագործում, որոնք կարող են միաժամանակ աշխատել տարբեր վայրերում</p>	Շինարարության ընթացքում

6.2. Արտակարգ և վթարային իրավիճակներ

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ ՕԳ և ենթակայանի շինարարական աշխատանքները դադարեցվում են, հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, սպասարկող անձնակազմը շտապ տեղափոխվում է անվտանգ վայր:

Երևույթների և իրավիճակի մասին անմիջապես տեղեկացվում են արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզի ստորաբաժանման պատասխանատուները և տեղական ինքնակառավարման մարմինները:

5.1. Մշտադիտարկումների ծրագիր

ՕԳ և ենթակայանի շինարարական աշխատանքների և հարակից տարածքներում մշտադիտարկումների իրականացումը հնարավորություն կընձեռնի ստեղծել տեղեկատվական հենք՝ բացասական երևույթների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մշտադիտարկումները իրականացվելու են վիզուալ եղանակով, մշտադիտարկումների ժամկետը կկազմի 3 ամիս:

Մոնիթորինգը կիրականացվի ներքոհիշյալ տեղամասերում և նշված հաճախականությամբ:

Աղյուսակ 8.2.

N	Վերահսկվող տեղամասը կամ միջավայրը	Վերահսկման առարկան կամ միջոցառումը	Վերահսկման եղանակը	Վերահսկման պարբերականությունը
1	Շինհրապարակ	Օդում փոշու պարունակության վերահսկում	Արտաքին զննում, ջրցանի ավելացում	մշտական
2	Մոտակա առվակներ	Ջրային ռեսուրսների աղտոտման կանխում ավտոտրանսպորտային միջոցների	Տեսադիտարկում /վիզուալ/, վթարային իրավիճակներում արտահոսքի	շաբաթական

		վառելիքի կամ քսայուղերի վթարային արտահոսքի պատճառով	օջախի մեկուսացում	
3	Ավտոտրանսպորտ	Օդում այրման արգասիքների վերահսկում	Արտաքին զննում, շարժիչների կարգաբերում	մշտական
4	Շինհրապարակ և հարակից տարածքներ	Բուսատեսակների, դրանց աճելավայրերի և պոպուլյացիաների վիճակի փոփոխության մշտադիտարկում	Արտաքին զննում, դաշտային հետազոտություններ	Սեզոնային
5	Հողային ծածկույթի հենասյուների և ենթակայանի տարածք	Հողի աղտոտման կանխում հնարավոր արտահոսքերից	Տեսադիտարկում /վիզուալ/, վթարային իրավիճակներում արտահոսքի օջախի մեկուսացում	Շինարարական աշխատանքների և յուղի փոխման աշխատանքների ընթացքում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
2. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ: ЕМЕР/ЕЕА
3. “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ” հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N 91 – Ն Որոշմամբ
4. ՌոժիժեձեւիաՅ էժեիձոժեիձեւՅ ՌԻՃԱ II -7.01-96
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Госкомгидромет, Ленинград, 1986
6. Пособие по составлению раздела проекта “Охрана окружающей природной среды ” к СНиП 1.02.01-85. Госстрой СССР, ЦНИИПРОЕКТ, Москва, 1989г.
7. РД 52.04.186-89. Руководство по контролю загрязнения атмосферы. ГК СССР по гидрометеорологии
8. “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987
9. ГОСТ 3195.1-2005. Шум. Затухание звука при распространении на местности. Расчет поглощения звука атмосферой.
10. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007
11. Հայաստանի բնաշխարհ, 2006
12. Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր, 2002
13. Հայաստանի կենսաբազմազանության առաջին ազգային զեկույց, 1999
1. Հայաստանի բույսերի Կարմիր գիրք, 2010թ.
2. Հայաստանի կենդանիների Կարմիր գիրք, 2010թ.
3. Venomous snakes of Armenia, Aghasyan, A., Aghasyan, L., 2014
4. Авагян А.В. Фауна и экология насекомых Армении. Автореф. к.б.н. Ереван, 2010.
5. Агаджанян Ф.С. Биология и морфологические особенности обыкновенной лисицы в Армении. Автореф. к.б.н. Ереван, 1993.
7. Даревский И. С., 1975. Редкие и исчезающие виды земноводных и пресмыкающихся Закавказья. Материалы конф. «Фауна и ее охрана в республиках Закавказья». Ереван: Изд-во АН Арм. ССР.
8. Касабян М.Г. О современном распространении кавказской выдры в Армении. Тез. докл. респ. научн. конф. по зоологии. Изд.НАН РА, Ереван, 2001.стр.62-63.

9. Касабян М.Г. Хищные млекопитающие Армении. Автореф. канд. биол. наук. Ереван, 2001.
10. Мартиросян Б.А., Папанян С.Б. Дикие млекопитающие Армении. Изд.АН АрмССР. 1983.
11. Попов Г.Ю. Эколого-фаунистическое исследование и высотное распространение некоторых мелких млекопитающих Армении. Автореф. к.б.н. Ереван, 2003.
12. Туниев Б. С., Орлов Н.Л., Ананьева Н.Б., Агасян А.Л. 2009. Змеи Кавказа (таксономическое разнообразие, распространение, охрана). СПб-М.: Зоологический институт РАН. 303 с.
13. Формозов А.Н. Звери, птицы и их взаимосвязь со средой обитания. М., 1976.
14. Adamian, M.S. and Klem, D. Jr. 1999. Handbook of the Birds of Armenia. Oakland: American University of Armenia Corporation
15. Adamian, M.S. and Klem, D. Jr. 1997. Field guide to Birds of Armenia. Oakland: American University of Armenia Corporation
16. Aram Aghasyan, Levon Aghasyan, Eduard Yeghiasaryan, Silva Amiryan. “Amphibians and reptiles in the new edition of the Animals’ Red Data Book of Armenia” Agriculture, Forestry and Fisheries, 2013; 2(2): Pages 77-88,
17. “Ecoregional Conservation Plan for the Caucasus 2010” CBC, revised 2012, Tbilisi
18. WWF- www.panda.org/armenia
19. Tuzov V. K. (editor). Guide to the butterflies of Russia and adjacent regions (Lepidoptera, Rhopalocera). – Sofia-Moscow, v. 1, 1997, 480 pp.; v. 2, 2000, 580 pp.
20. Авагян Г. Д. Кузнечиковые (Tettigonoidea) Фауна Армянской ССР. Насекомые прямокрылые. - Ер., 1984, 162 с.
21. Авагян Г. Д. Саранчовые (Acridoidea). Фауна Армянской ССР. Насекомые прямокрылые. - Ер., 1975, 210 с.
22. Марджанян М. А. Щелкуны (Elateridae) Армянской ССР. - Ер., 1986, 272 с.
23. Яблоков-Хнзорян С. М. Жужелицы (Carabidae), ч.1. Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. - Ер., 1976, 292 с.
24. Яблоков-Хнзорян С. М. Майки (Meloidae) и Пыльцееды (Alleculidae). Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. - Ер., 1983, 156 с.
25. Яблоков-Хнзорян С. М. Пластинчатоусые (Scarabaeoidea). Фауна Армянской ССР. Насекомые жесткокрылые. - Ер., 1967, 225 с.
26. Կենսաբանական քաղաքականության մասին կոնվենցիա,, ՀՀ հիմնադրո՞ղի ազգային գեկույցի, 2014 թ

Հավելվածներ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ

**ՍՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

Սույն վկայականով հաստատվում է «27» Հոկտեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՅՈՒՋՈՄ» ՍՊԸ

2. ՍՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ԿԱՅՐԸ ԵՎ ՍՆԿԱՆՈՒՄԸ

Մարզ Սյունիք, համայնք Մեղրի գյուղ Շվանիձոր 6-րդ փողոց 5 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀՄՄԱՐ ՀԻՄՔ ՀՆԱԴՐՈՒՄԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Սնշարժ գույքի՝ հողամասի առուվաճառքի պայմանագիր 24.10.2018թ. ս/մ 1181 ք.Մեղրի

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 09-074-0434-0003

Մակերեսի չափը (հա)՝ 0,04

Նպատակային նշանակությունը՝ Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Կապի

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԶԱՐՏՈՒՂԱՐ

№ 5/22.3/51715
«09» «07» 2019թ.

«Յուրոմ» ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն
պարոն Հ.Եսայանին
/հասցե՝ 0015, Գ.Լուսավորիչ 9,
«Երևան Պլազա» քիզնես կենտրոն/

Հարգելի պարոն Եսայան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի հունիսի 6-ի N 1056 գրության հայտնում եմ, որ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի Շվանիձոր բնակավայրի հարակից տարածքում («Արևիք» ազգային պարկի տարածքով էլեկտրամատակարարման և օպտիկամանրաթելային օդային գծերի կառուցում) նախատեսվող գործունեության տարածքը համընկնում է շրջակա միջավայրի նախարարության «Ձանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» մասնաճյուղի «Արևիք» ազգային պարկի տարածքի հետ և համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ կետի՝ վերը նշված գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Հարգանքով
Պշտունակատար
7/9/2019

X _____
ՎԱՆԵ ՏՐԼԱՎԵՆԱ

Վ.Զիլավյան

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

ԿԿԳ Բ ՀՊՏ-ներին և ԴԿ բաժին
Ն.Խաչատրյան
011 818 579



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական սրահ 3
10010608@e-citizen.am | min_ecology@mnp.am | www.mnp.am
(+374) 11 818 520 | Fax: (+374) 11 818 506

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ՅՈՒՔՈՄ>> ՄՊԸ ԿՈՂՄԻՑ ՆԱԽՏԵՍՎՈՂ ԲԶՋԱՅԻՆ ԿԱՊԻ ԿԱՅԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՍՆՈՒՑՄԱՆ և ՕՊՏԻԿԱԿԱՆ ՄԱՆՐԱԹԵԼԻ ՕՂԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ / ՇՄԱԳ/ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	Դիտողության և առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն / հիմնավորում	Կատարված փոփոխություն
Շրջակա միջավայրի վրա ազդեղության փորձաքննական կենտրոն	անհրաժեշտ է ներկայացնել տեղեկատվություն՝ բնակելի տարածքներից, հարևանությամբ առկա հանրային օբյեկտներից և ենթակառուցվածքներից գործունեության ենթակա տարածքի կոնկրետ գտնվելու հեռավորությունների վերաբերյալ	Տեղեկատվությունը լրամշակվել է	Ներկայացված դիտողությունը լրամշակվել և ներառվել է համապատասխան բաժնում:
Շրջակա միջավայրի վրա ազդեղության փորձաքննական կենտրոն	աշխատանքային ծավալներում ներառել նաև տեղեկատվություն՝ բջջային կայանի LՏԵ-ի ենթակայանի տեղադրման աշխատանքների, հողային զանգվածների ծավալների, աշխատանքների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական միջոցառումների վերաբերյալ /հաշվի առնելով նաև՝ տրանսֆորմատորային յուղի հետագա օգտագործումը, ենթակայանի համար անվտանգության գոտու չափերի ապահովումը և այլն/,		Ներկայացված դիտողության վերաբերյալ համապատասխան բաժնում կատարվել է շտկո
Շրջակա միջավայրի վրա ազդեղության փորձաքննական կենտրոն	մշտադիտարկումների ծրագիրը լրակազմել նաև կենսաբազմազանություն և հողի մոնիթորինգի միջոցառումներով, ներկայացնել բապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը,		Ներկայացված դիտողության վերաբերյալ համապատասխան բաժնում կատարվել է շտկո
Շրջակա միջավայրի վրա ազդեղության փորձաքննական կենտրոն	անհրաժեշտ է ներկայացնել սոցիալական հնարավոր ազդեցությունները, ռիսկերը, օգուտները,		Ներկայացված դիտողության վերաբերյալ համապատասխան բաժնում կատարվել է շտկո

<p>Կենսառեսուրսների կառավարման գործակալության</p>	<p>1.1 Ներկայացնել կենսաբազմազանության վերաբերյալ տարածքում իրականացված դաշտային ուսումնասիրությունների արդյունքներ՝ համապատասխան մասնագետի հիմնավորումով:</p> <p>1.2 «Մոտեցում և մեթոդներ» 1.4 ենթակետի 3-րդ պարբերությունը /էջ 10/ անհրաժեշտ է լրամշակել հետևյալ կերպ՝ «Տարածաշրջանում գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքների հիմնական մասը ընդգրկված է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կազմում, որը ստեղծվել է ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1465-Ն որոշմամբ:</p> <p>1.3 «Նորմատիվ իրավական հիմքեր» 1.5 ենթակետում՝ /էջ 11/ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը կրկնվում է:</p> <p>1.4 «Բուսական աշխարհ» բաժնում ներկայացնել տեղեկատվություն կոնկրետ ազդեցության ենթակա տարածքում (հենասյուններ և այլն) առկա՝ հաշվետվության էջ 15-րդ էջում նշված՝ ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված 68 տեսակներից որոնք են հանդիպում և ըստ այդմ նախատեսել բուսական աշխարհի պահպանության համապատասխան միջոցառումներ (ներառյալ ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշմամբ սահմանված դրույթները):</p> <p>1.5 Նորմատիվ-իրավական հիմքեր» բաժնի /էջ 11/ 7-րդ կետը՝ «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրիք (2010)» խմբագրել «ՀՀ կառավարության 29.01.2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր</p>	<p>1.1 Նախատեսվող գործունեության տարածքում կենսաբազմազանության վերաբերյալ իրականացված դաշտային և առկա գրականության ուսումնասիրությունների արդյունքներ բերված են ՇՄԱԳ հաշվետվության համապատասխան բաժիններում:</p> <p>1.2 Ընդունվել է</p> <p>1.3 Ընդունվել է</p> <p>1.4 Ըստ առկա գրականության՝ Շվանիձոր համայնքի շրջակայքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բերված են ՇՄԱԳ հաշվետվության «Բուսական աշխարհ» բաժնի վերջին պարբերությունում:</p>	<p>1.2 Ներկայացված դիտողությունը լրամշակվել և ներառվել է համապատասխան բաժնում:</p> <p>1.3 Ներկայացված դիտողության վերաբերյալ համապատասխան բաժնում կատարվել է շտկում:</p>
---	--	--	--

	<p>գիրքը հաստատելու մասին» N 72-Ն որոշումը», իսկ 8-րդ կետը հանել, քանի որ այն 9-րդ կետի կրկնությունն է:</p> <p>1.6 «6.3 Մշտադիտարկումների ծրագիր» բաժնում աղյուսակ 8.2.-ում նախատեսել մշտադիտարկում՝ բուսական տեսակների, աճելավայրերի, պոպուլյացիաների վիճակի փոփոխության վերաբերյալ:</p> <p>1.7 «Նորմատիվ իրավական հիմքեր» բաժնի 6-րդ կետը փոխարինել «ՀՀ կառավարության 29.01.2010թ. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում» նախադասությամբ:</p> <p>1.8 «Միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ» բաժնի 18-րդ կետը միացնել 17-րդ-ին:</p> <p>1.9 «Կենդանական աշխարհը» բաժնում տրված է ընդհանուր տեղեկատվություն ֆաունայի վերաբերյալ մինչդեռ անհրաժեշտ է ներկայացնել նաև կոնկրետ տեղեկատվություն նախատեսվող աշխատանքների տարածքի կենդանական աշխարհի վերաբերյալ և ավելացնել տեղեկատվություն ՀՀ կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված տեսակների վերաբերյալ, առաջնորդվելով 29.01.2010թ. ՀՀ կառավարության N 71-Ն որոշմամբ:</p>	<p>Դաշտային ուսումնասիրությունների արդյունքում նախատեսվող գործունեությամբ պայմանավորված կոնկրետ ազդեցության ենթակա տարածքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Այս մասին տեղակատվությունը բերված է ՇՄԱԳ հաշվետվության 5.1.6 ենթաբաժնում, էջ 43:</p> <p>1.5 Ընդունվել է</p> <p>1.6 Ընդունվել է</p> <p>1.7 Ընդունվել է</p>	<p>1.5 Ներկայացված դիտողությունը խմբադրվել և ներառվել է համապատասխան բաժնում:</p> <p>1.6 Ներկայացված դիտողությունը ընդունվել է և «6.3 Մշտադիտարկումների ծրագիր» բաժնում աղյուսակ 8.2.-ում նախատեսվել է մշտադիտարկում՝ բուսական տեսակների, աճելավայրերի, պոպուլյացիաների վիճակի փոփոխության</p>
--	--	---	--

		<p>1.8 Հնդունվել է</p> <p>1.9 Կա հավանականություն, որ «Կենդանական աշխարհը» բաժնում ներկայացված կիսաանապատային լանդշավտային գոտուն բնորոշ կենդանատեսակները հանդիպեն նախատեսվող աշխատանքների տարածքում, սակայն դաշտային ուսումնասիրությունների արդյունքում նախատեսվող գործունեությամբ պայմանավորված կոնկրետ ազդեցության ենթակա տարածքում ՀՀ կենդինների Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Այս մասին տեղակատվությունը բերված է ՇՄԱԳ հաշվետվության 5.1.6 ենթաբաժնում, էջ 43:</p>	<p>վերաբերյալ:</p> <p>1.7 Ներկայացված դիտողությունը խմբադրվել և ներառվել է համապատասխան բաժնում:</p> <p>1.8 Ներկայացված դիտողության վերաբերյալ համապատասխան բաժնում կատարվել է շտկում:</p>

